

ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

THE WONDERFUL RESURRECTION OF JESUS

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1996**

«Եթէ զիս տանիս դէպի Յորդանան
Բացուած երկինքի հրաշքներուն ներքեւ,
Կու գամ վայելել Քու սիրոյդ պարգեւ
Վայրերն այն դալար, ջուրերն հանգստեան:

Ո՛հ, միթէ կրնա՞մ գալ Քու ետեւդ
Երբ խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա.
Բայց ի՞նչ սերտ հրապոյր, ի՞նչ բուռն ուժ է դա՝
Որ զիս մի՛նչեւ հո՛ն կը տանի Քեզ հետ»:

--Եղիշէ Արքեպ. Գուրեան

Խ Ա Չ Ը

Թէ պաշտումի թափն ունենաս՝
Տէրն զոյգ մը թեւ քեզի կու տայ,
Որպէս զի Իր Ուծը անհաս
Սաւառնացնես երկրի վըրայ:

Թէ տեսիլ ներ ունենաս դուն՝
Յայտնութիւն մ'ալ քեզի կու տայ,
Որպէս զի Ի՛ր Կամքը արթուն
Հանդիսացնես երկրի վըրայ:

Թէ բարձունքէ մ'իսուիս իր հետ՝
Ինքը քեզի շե՛շտ մը կու տայ,
Որպէս զի Իր Խօսքը յաւէտ
Արձագանգես երկրի վըրայ:

Իսկ Իր լոյսին թէ երթաս մօտ՝
Ինքը քեզի ջահ մը կու տայ,
Որպէս զի Իր Փառքն անաղօտ
Վարդավառես երկրի վըրայ:

Թէ համբուրուիս հետ Իր վէրքին՝
Ինքը քեզի կեանք մը կու տայ,
Որպէս զի Իր Շունչը անգին
Ոգեւորես երկրի վըրայ:

Ու այդ Ուծը, այդ Կամքն ու Խօսք
Այդ Կայծն ու Վրէժ, այդ Փառքը սուկ,
Այդ Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն համայն
Քեզի տըրուած ԽԱՉՆ է միայն:

--Շահան Ռ Պէրպէրեան

Մ Ո Ւ Տ Ք

Աշխարհի մէջ ինչքան իրականութիւն ու ճշմարտութիւն որ կայ, կա՛յ նաեւ անոնց նմանող կամ զանոնք կեղծող նմանութիւններ: Օրինակ՝ Բրիստոսի Հրաշափառ ու պանծալի Յարութիւնը չարափոխող ջոճուազոծ նապաստակը, որուն միջուկը պարպ է և իմաստագուրկ: Գունագարդուած հաւկիթն ու Զատկուայ հաւկիթախողը: Ս. Զատկի նպատակն է մեր ակնարկը այս նիւթական աշխարհէն դարձնել դէպի կեանքի մեծագոյն գաղտնիքը, դէպի յաւերժական ճշմարտութիւնը, որ հոգեւորը կը թանձրացնէ, աննիւթականը կը մարմնաւորէ և անտեսանելին տեսանելի կ'ընէ: Բրիստոսի Յարութիւնը ցնորք մը, անուրջ մը չէ՛, այլ հրաւեր մըն է հաւատալու թէ այդ անհերքելի ճշմարտութիւնը պատմութեան ընթացքը յեղաշրջող անպարտելի Յարութիւնն էր:

Սուրբ Աւետարաններու մէջ ո՞ւր յիշուած է "նապաստակը" որպէս աստուածահրաշ մեռելոց Յարութիւն: Կողանդ պապայո՞վ ու ջոճուայէ ջինուած նապաստակո՞վ մը պիտի դաստիարակենք մեր մանուկները որ հաւատան Յիսուս Բրիստոսի Ս. Ծննդեան ու Մեռելոց պանծալի Յարութեան: Մանուկներ կ'ուզեն գիտնալ Յիսուս Մանկան իրական Ծնունդը, փրկարար Խաչելութիւնը և հրաշափա՛ռ Յարութիւնը:

Ի՞նչ առնչութիւն ունի նապաստակը Յիսուս Բրիստոսի պանծալի Յարութեան հետ: Ո՞ւր է իմաստը նապաստակի մը գլխուն իր երկու ցցուած ականջներով: Բրիստոսի թշնամիները ջանացին ծածկել Բրիստոսի Յարութիւնը ստութեամբ, իսկ Բրիստոնեայ կոչուած աշխարհը կը Բողարկէ Զայն իմաստագուրկ նապաստակով մը: Ի՞նչ հեթանոսութիւն, ի՞նչ ամօ՛ղթ:

Հոգեգալուստի հրեղէն ու սրբարար զօրութիւնը թող մաքրէ՛ ու սրբացնէ՛ այս Սուրբ Յարութեան օրը մեզ ու բոլոր հաւատացեալներս կեղծ պատրանքներէ և առաջնորդէ Բրիստոսի ջէնջո՛ղ ու հոգեպարար Յարութիւնը տեսնելու իրականութեան:

Այս համեստ, սակայն հոգեթով ու հոգեջունչ խորհրդածութիւններս կը ձօնեմ այն բոլոր նահատակ ու անձնանուէր պապերուս ու մամիկներուս, որոնք Բրիստոսի՛ Յարութեան վստահութեամբ փակեցին իրենց աչքերը և աւանդեցին իրենց հոգիները: Սուրբ ըլլայ անոնց հաւատքի սրբաշող յիշատակը:

Ա. Նորատունկեան
Ապրիլ, 1996

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Աւետարանչութիւնը որ կը սկսի անվեհեր առաքելներու քարոզչութեամբ, չի սկսիր Քրիստոսի Ա. Ծնունդով, այլ կը սկսի Անոր յաղթակա՛ն Յարութեամբը: Քրիստոսի թափուր գերեզմանի Յարութեան լոյսը տակաւ կը լուսաւորէ՛ ամէն մարդ, որ աշխարհ կու գայ: Քրիստոնէութիւնը՝ **Յարութեա՛ն** Կրօնքն է ու կենսակոչ Յիսուսի Յարութեան հրաշապատում դէպք իրագործումը: Աւետարանին իւրաքանչիւր դրուաքն պերճախօս մեկնաբանութիւնն է Յարութեան խորհուրդին: Յիսուսի իւրաքանչիւր խօսքը և բժշկութիւնը յարութեան լոյսին առաջնորդող ճանապարհ մըն է:

Աշխարհի քաղաքակրթութեան, պատմութեան և հոգեբանութեան ընթացքը յեղաշրջող անհերքելի ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի Յարութիւնը եղաւ: Յարութեան գեղատեսիլ իրողութիւնը՝ նսեմացուց հեթանոս կրօնները և յեղաշրջեց ժողովուրդներու հոգեմիճակը:

Յարութեան այգալոյսին՝ անցեալի մարգարէութիւններն ու ապագայի գործադրումները գրկախառնուեցան: Յարութեան իրողութիւնը թէւ պատմական դէպք մըն է, սակայն մեզի կը մնայ անքացատրելի խորհուրդ: Քրիստոսի

«Յարութիւնը կը մնայ գագաթնակէտային իմաստով ամենէն փառապանծ և ներշնչող տօնը, փառապատակը Քրիստոսի կեանքին և կտակին»:

Քրիստոսի աշակերտները պաշտպանեցին Յիսուսի Յարութիւնը իբրեւ դէպք, իբրեւ հրաշք, իբրեւ հաւատք, և իբրեւ իրենց կեանքին յոյսը: Յիսուս Քրիստոս՝ Իր Յարութեա՛մբ ապացուցուց թէ վերջին յաղթականը մահը չէ, այլ՝ Իր **Խօ՛սքն** է:

Պօղոս առաքել քիւրեղացուց Քրիստոնէութիւնը որպէս Յարութեա՛ն Աւետարան ու տարածեց զայն համայն Հռոմէական կայսրութեան մէջ--Ա. Կորնթ. ԺԵ.3-4.

«Ես ձեզի աւանդեցի նախ այն՝ ինչ որ ես ի՛նքս ընդունեցի. թէ Քրիստոս մեռաւ մեր մեղքերուն համար՝ ըստ Գրուածքներուն, և թէ՛ թաղուեցաւ, և թէ՛ երրորդ օրը յարութիւն առաւ ըստ Գրուածքներուն, և թէ՛ երեւցաւ Կեփասին ու ապա՝ Տասներկուքին, ապա երեւցաւ միանգամայն աւելի քան հինգ հարիւր եղբայրներու, որոնցմէ շատերը կան մինչեւ հիմա. ոմանք ալ ննջեցեալ եղան: ... Ամենէն ետք երեւցաւ նաեւ ինձի՝ անարգիս,

որովհետև ես տրուպն եմ առաքելներուն. ես՝ որ ոչ իսկ արժանի եմ
առաքել կոչուելու, քանի որ հալածեցի Աստուծոյ եկեղեցին:

Հրեայ քահանայապետներուն ջինծու և սուտ հանրային կարծիքը փլա
առաքելներու ճշմարիտ վկայութեան առջև: Առաքելներ ճառագայթեցին
Քրիստոսի Յարութիւնը անպարտելի ինքնավստահութեամբ ու դարձուցին
զայն օրուան տեղեկատուութիւնը բոլոր Երուսաղէմ քաղաքի փողոցներուն
մէջ: Հրեայ իշխանները, որոնք խաչել սուած էին Յիսուսը, իրենց վախէն
պաշտպանողակաւ, դարձան փոխանակ յարձակողական ըլլալու: Առաքելներ
եթէ կը շատագովէին կեղծ ու խարդախ Յարութիւն մը, իրենց վկայութիւնը
շուտով պիտի հերքուէր քահանայապետներու ապացոյցներով: Մինչդէռ
Յարութեան իրական եղելութիւնը ցնցեց Երուսաղէմը: Քրիստոսի
ժամանակակից զանազան ազգայնամոլ շարժումներ գոյութիւն ունեցան,
որոնցմէ ո՛չ մէկը դարձաւ համաշխարհային տիրապետող կրօն:

Աւետարանը բարոյագիտական օրէնսդրութիւն մը չէ՛: Ոչ ալ բնա-
զանցական տեսութիւն մը: Աւետարանը առաջագոյն *բարի ու միսիթա-
րակա՛ն* լուր մըն է յաւիտենական կեանքի: Առաքելներու վկայութիւնը
հաւատալի դարձաւ, որովհետև *իբե՛նք* կը հաւատային: Բնականն ու
անբնական գօրութիւններ, չկրցան ծածկել Յարութեան իրողութիւնը:

Ի՞նչ է մեռելոց յարութիւնը:

Մեռելոց յարութեան իսկութիւնը, 1. Մեռնող մարդ էակի մը անջնջացած
դիակը գմուսելով թանգարանի մը մէջ պահուիլը չէ, նման Լենինի մարմնին:
2. Մեռնող արարածի մը հոգիին վերամարմնացումը չէ՛ որեւէ կերպարանով,
«Մահը ողբերգութիւն չէ և ոչ ալ ազատութիւն, այլ փոխակերպումը նոր
կեանքի, հետեւաբար նոր տառապանքներու»-- կ'ըսէ Պուտտա: 3. Մեռելներուն
իրենց *հարազատներու գիտակցութեանը* մէջ ապրիլն իսկ յարութիւն չի
նշանակեր, ո՛չ ալ Հոգւո՛յ անմահութիւնն է:

Յիսուս Քրիստոսի քարոզած ու խոստացած *«Ես եմ Յարութիւնն ու
Կեանք»* կը նշանակէ.

***«Ինչո՞ւ կը զարմանաք. որովհետև պիտի գայ
ժամանակ, երբ բոլոր տնոնք որ գերեզմաններու
մէջ են՝ պիտի լսեն Անոր ձայնը և դուրս պիտի
ելլեն. տնոնք որ բարի գործեր ըրած են՝ կեանքի
յարութեան համար, իսկ տնոնք որ չար գործեր ըրած
են՝ դատաստանի յարութեան համար»--Յով. Ե.28-29:***

Յարութեան գաղափարին և իրողութեան մեծագոյն, և հզօրաշեշտ

ախոյեանը հանդիսացաւ Պօղոս առաքեալ: Առաջին քրիստոնէաներու մէջ բարոյական գերադաս ուժ մը արտայայտուեցաւ, աստուածային գերի վեր կեանք մը և նկարագիր մը ի յայտ եկաւ որուն դրոշապատճառը «Մեռելոց Յարութեան հաւատալն էր»: Պօղոս առաքեալի Զրիստոսը՝ Յարուցեալ Տէրն էր, հզօր աստուածային անձնաւորեալ Հոգին որ մահուան իշխանութիւնը խորտակեց:

Տիեզերական թատերաբեմին վրայ խորախորհուրդ գարմանալիք մըն է Յիսուսի *Մարդեղութիւնը* ու նաեւ մեռելներէն *Յարութիւն* առնելը: Մոյն պատճառին համար մեր Տէրը կ'ըսէ. *«Ինչո՞ւ կը գարմանամ. որովհետեւ պիտի գայ ծամանակ, երբ բոլո՞ր անոնք որ գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն Անոր ձայնը և դուրս պիտի ելլեն»*: Յարութիւնը երեւակայական վարպետութիւն մը չէ՛, առասպել մը չէ՛ անցեալի մշուշապատ դարերու, այլ հաւատքի *ուստո՞ւմ* մը և յոյսի աներեր *տեսողութի՛ւն*: Յարութեան մասին Զրիստոսի նախաձայնութիւնը ո՛չ այնքան գարմացնել էր, որքան հիացնել կամ յուզել:

Մինչեւ Մարդեղեալ աստուածութիւն, մարդ էակ որեւէ քաղաքակրթութեան մէջ ո՛չ իմացած ու ո՛չ ալ մտնէն անցուցած էր "մեռելներու Յարութիւնը": Մահը վերջ մը նկատուած էր փառապանծ կեանքին: Աշխարհի կեսարները, իմաստասէրները ու փարաւոնները խոնարհած էին յոխորտ մահուան պատուանդանին: Մինչեւ Մարդեղութեան փրկարար գօրութիւն՝ Զրիստոս, կորուստն ու մահը կը բարբանջէին ըսելով. «Մե՛նք ենք ձեր վախճանը ո՛վ մարդոց որդիներ, ուստի գոհացում տուէք ձեր մարմնական բոլոր մղումներուն, որովհետեւ պիտի՛ մեռնիք»:

Անյարթ հաւատքի վեթերան Պօղոս առաքեալ ու Յարութեան գաղափարին և իրողութեան մեծագոյն, և հզօրաջեջտ ախոյեանը կ'ըսէ.

1. *«Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Զրիստոսի վրայ՝ ողորմելի ենք իմ բոլոր մարդիկ»*--Ա. Կորն. ԺԵ.19:
2. *«Ինչպէս որ Անբանոյ ամէնքը կը մեռնին, այնպէս ալ Զրիստոսով ամէնքը պիտի կենդանանան՝ իւրաքանչիւրը իր կարգին»*-- ԺԵ. 23-23:
3. *«Ի՞նչ օգուտ էր ինձի, եթէ մեռելները յարութիւն չեն առներ. ուտենք, խմենք, որովհետեւ վաղը պիտի մեռնինք»*--ԺԵ.32:
4. *«Հիմա ձեզի ծածուկ խորհուրդ մը յայտնեմ: Բոլորս չէ՛ որ պիտի մեռնինք. բայց երբ վերջին փողը հնչէ՝ ամէնքս ալ յանկարծ պիտի նորոգուինք ակնթարթի մը մէջ: Արովհետեւ փողը պիտի հնչէ և մեռելները յարութիւն պիտի առնեն անեղծ մարմիններով, և մենք պիտի նորոգուինք: Արովհետեւ մեր*

այս եղծանելի բնութիւնը պէտք է անեղծ բնութեան փոխուի, այս մահկանացու բնութիւնը պէտք է անմահ բնութեան փոխակերպուի, այն ատեն պիտի իրականանայ գրուած մարգարէութիւնը, որ կ'ըսէ»:

***«Ո՞ւր է, մա՛հ, քու յաղթութիւնդ.
ո՞ւր է, դժոխք, քու խայթոցդ» -ՃԵ.51-56:***

Կուգեմ խտացեալ կենսագրութիւնը տալ անոնց, որոնք չեն ճանչնար Պօղոս առաքեալին ո՛վ ըլլալը: Ան Տարսնէն եկած էր Երուսաղէմ, ուսանելու Մովսէսի Օրէնքը և Ճշմարիտ ճամբան: Ուխտած էր ի գին ամէն բանի վերջ տալ Գալիլեացիներու աղանդին (Քրիստոսի հաւատացողներուն): Կասկածելիները կը տանէր Տաճար խարազանուելու և բանտարկելու: Յիսուսի հետեւորդներուն համար, *մահուան հրեշտակն* էր: Յունախօս չրեաները Երուսաղէմէն խոյս տուած ու փախած էին մինչեւ Դամասկոս ու Անտիոք:

Պօղոս ինքզինքին հետ անհաշտ հոգեվիճակի մը մէջ էր ուր կը մարտնչէին իրարու հակընդդէմ զգացումներ: Պարապն ու անստուգութիւնը որ կը լայննար անոր հոգիին մէջ, փոխան նուազելու կը խորանար: Յիսուս Պօղոսին հանդիպեցաւ երկինքէն լուսեղէն և ձայնեղէն հօգօր ներգործութեամբ: Ողջ էութեամբ ցնցուած՝ Սաւղոսի աչքերը փակուեցան արտաքին աշխարհի ու խորահայեաց նայուածքով անոնք սեւեռեցան իր ներքին էութեան վրայ: Պօղոս իր պարտութեան և յուսահատութեան մէջ լսեց քաղցրահունչ Ձայն մը, որ կ'ըսէր իրեն.

«Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ կը հալածես զիս»:

Վերոյիջեալ մեղմ և բնութիւն Ձայնը որ եկաւ Յարուցեալի սրտէն, դպաւ հիւրընկալ սրտի մը, ո՛չ թէ մոխրացնելու կամ դատապարտելու համար, այլ փոխակերպելու զայն: Եւ որ մարդն էր որ Պօղոսի մէջ կը յայտնաբերուէր: Սաւղոս դարձաւ՝ Պօղոս: Հալածիչը՝ տարածիչ, ատելութիւնը՝ սէր և չարին իջիանութիւնը՝ ծառայութիւն Երիստոսին: Յարուցեալ Փրկիչ Երիստոս *լուսած նու ինչ* ներգործութեամբ հանդիպեցաւ ու խօսեցաւ Պօղոսի հետ Դամասկոսի մուտքին:

Իսկութեան մէջ, Պօղոս առաքեալ աւետարանիչ մը դարձաւ տարածելու համար Յիսուս Երիստոսի յայտնութիւնը: Իր կոչումը քարոզել էր հեթանոսներուն, խիզախօրէն և բազմաթիւ հակաճարութիւններ յաղթահարելով: Առաքելական Դարուն Պօղոս կրցաւ իր հաւատքը բացատրել աստուածաբանական իմաստասիրութեամբ ու բացատրեց բազմաթիւ

հարցումներ:

Պօղոս առաքելին կեանքը վերջացաւ աննշան խաւարապատ մթութեան մէջ երբ փայլատակող կացինը անջատեց յոգնած գլուխը ժրջան մարմինէն, սակայն անոր ֆարոգութեան բարձրաաղաղակ ջահը կը լուսաւորէ անհամար խաւարամիտ կեանքերը:

Մարդ արարածը երեք պատճառներով կը փոխէ իր կրօնը, դաւանանքը և կուսակցութիւնը: 1. **Դրամի**, 2. **Փառքի** և 3. **Կնոջ** մը համար: Պօղոս առաքելի կեանքի ապրումին մէջ, այս երեքէն ո՛չ մէկը գոյութիւն ունեցաւ: Ընդհակառակը, Բրիստոսի աւետարանչական ծառայութիւնը ի՛ր աշխատանքով (վրանագործութեամբ) ու անձնական ծախսերը հոգաց իր ֆսակէն: Փոխանակ փառքի ու ծափահարութեան, ան արժանացաւ հալածանքի ու քանտարկութեան: Իր անբասիր կենցաղավարութիւնը ցոյց կու տայ, թէ արտամուսնական կամ գաղտնի սեռային յարաբերութիւններ չունեցաւ, այլ ինքզինք նուիրեց սուրբ ապրումի: Պօղոս և Պետրոս իրենց արեան նահատակութեամբ վկայակոչեցին Բրիստոսի առաքելութեան տիեզերական ոգին:

Պօղոս առաքելին դարձը դէպի Բրիստոսի հաւատքը, ամենագոյեցիկ ներգործութիւններէն մէկը մնաց Բրիստոնէական երկհազարամեայ կեանքին մէջ: Այժմ կրնանք ֆաջաբար ուսումնասիրել Պօղոս առաքելի մէջբերումները մեռելոց Յարութեան մասին:

***«Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք
Բրիստոսի վրայ՝ ողորմելի ենք քան բոլոր մարդիկ»:***

Որովհետեւ ա՛յն առաքելը որ ֆարոգեց ու վկայեց Բրիստոսի Յարութեան Աւետարանը, ի՛նք ամբողջանուէր կերպով ծառայեց սոյն հաւատքին: Պօղոս առաքել նման չէր Միջին Դարու կղերականներուն որոնք կ'ապրէին որպէս գահակալներ, տիրապետողներ ու դատաւորներ: Ան ապրեցաւ որպէս ծառայ իր հիմնած եկեղեցիներուն, անարգուած ու հալածուած իր հայրենի ցեղակիցներէն: Ոչ թէ Արեւմուտքի եկեղեցականներու նման միայն "Տուէ՛ք" բառը կը գործածէր, այլ՝ "Հրամանել"ու նուիրելու, հիւրասիրելու ու մատուցանելու համար ապրեցաւ ան: Պօղոս առաքելի անձնագոհութեան որպէս վարձատրութիւն, ան ստացաւ հետեւեալ գնահատանքները.

1. «Մինչեւ այսօր մնացինք ե՛ւ անօթի, ե՛ւ ծարաւ, ե՛ւ մերկ, ծեծուեցանք ալ և մնացինք անկայան. և չարաչար աշխատեցանք մեր ձեռքերով. կը բամբասէին մեզ՝ կ'օրհնէինք, կը հալածէին՝ կը դիմանայինք, կը հայհոյէին՝ կ'աղօթէինք. արակ-նշաւակ դարձանք ամբողջ աշխարհին,

չնչոց՝ ամենուն համար մինչեւ այժմ: ...Արդ, կ'աղաչեմ ձեզի, նմանո՞ղ եղե՛ք ինձի»--Ա. Կորնթ. 7.11-16

2. «Ամէն կողմէ ճնշուած՝ բայց ոչ ճզմուած, կարօտեալ՝ բայց ոչ յուսահատ, հալածուած՝ բայց ոչ լքուած, չարչարուած՝ բայց ոչ մեռած: Ամէն ժամ մեր մարմիններուն մէջ կը կրենք Յիսուսի մահը, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնուի մեր մարմիններուն մէջ. Բանգի, Բանի դեռ կենդանի ենք, միշտ մահուան կը մատնուինք Յիսուսի համար, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնուի մեր մահկանացու մարմիններուն մէջ»--Բ. Կորնթ. 7.8-11:
3. «Սա գիտենք թէ՛ Ան որ յարութիւն տուաւ Յիսուսի՝ մեզի ալ յարութիւն պիտի տայ Յիսուսի հետ, և ձեզի հետ միասին պիտի կանգնեցնէ Իր առջեւ»--Բ. Կորնթ. 7.14:
4. «Յիշէ՛ մեռելներէն յարութիւն առած Բրիստոս Յիսուսը, Դաւիթի եղէն, համաձայն իմ աւետարանիս, որուն համար կը չարչարուիմ ու ջղթայուած ալ եմ ինչպէս չարագործ մը»--Բ. Տիմոթ. Բ.8-9:
5. «Բոլոր անոնք՝ որ կ'ուզեն աստուածաշտութեամբ ապրիլ ի Յիսուս Բրիստոս, հալածանքներու մէջ պիտի ըլլան»--Բ. Տիմոթ. Գ.12:

Բրիստոսի ջահակիր առաքեալները եթէ բացարձակ վստահ չ'ըլլային մեռելներու յարութեան, պիտի չհանդուրժէին վերոյիշեալ նեղութիւններն ու հալածանքները կրել: Սուրբ և իրենց Տիրոջ հաւատարիմ առաքեալներ, ինքնախաբէութեանց ցնորֆին մատնուած մարդիկ չէին, ստախօսներ չէին: Բիչըրտ Նիֆսընի (Ամերիկայի նախագահ)ի պաշտօնեաները սուտ խօսեցան պաշտպանեու համար իրենց նախագահը, սակայն երբ բանտարկութեան ու սուգանքի դատապարտուեցան, իրենց սուտ վկայութիւնը ետ փաշեցին: Աստուածաբարբառ և անվեհեր առաքեալները շարունակեցին իրենց վկայութիւնը ու կնքեցին իրենց հաւատումը արիւնագիր Աւետարաններով, որովհետեւ իրենք **տեսածն** ու շօշափեցի՛ն Յարուցեալ Բրիստոսը:

«Աստի՛ք բոլորը իրենց հաւատով վկայուած ըլլալով հանդերձ՝ չստացան Աստուծոյ խոստումը. որովհետեւ Աստուած մեզի համար աւելի լաւ բան մը նախատեսած ըլլալով՝ չուզեց որ անոնք խոստումին իրականացման հասնին առանց մեզի»
--Եբր. ԺԱ.39-40:

**«Ամէն կողմէ ճնշուած՝ բայց ոչ ճզմուած,
կարօտեալ՝ բայց ոչ յուսահատ, հալածուած՝ բայց
ոչ լքուած, չարչարուած՝ բայց ոչ մեռած: Ամէն**

**ժամ մեր մարմիններուն մէջ կը կրենք Յիսուսի
մահը, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնուի
մեր մարմիններուն մէջ. քանզի, քանի դեռ
կենդանի ենք, միշտ մահուան կը մատնուինք
Յիսուսի համար, որպէսզի Յիսուսի կեանքն ալ
յայտնուի մեր մահկանացու մարմիններուն մէջ»
--Բ. Կորնթ. Դ.8-11:**

Վերոյիշեալ հասուածին կեդրոնական ու շեշտեալ նախադասութիւնն է.
*«Անէն ժամ մեր մարմիններուն մէջ կը կրենք Յիսուսի
մահը, որպէսզի Յիսուսի կեանքն ալ
յայտնուի մեր մարմիններուն մէջ»:*

Քրիստոնեան չի կրնար ծոյլօրէն յանձնուիլ դիւրինին, դրամին, իր
«ես»ին կամ կազմակերպութեան զգայական ջահախնդրութեան: Դիւրինը
գործադրել՝ արժանիք չստացուիր Քրիստոսի ջարբին մէջ: Եթէ չ'ըլլար Ա.
Մահակ, Ա. Մեսրոպ և անոնց երանաշնորհ աշակերտներու դէպի ապագան
ուղղուած անձնագոհ գործունեութիւնը, անհասկնալի պիտի մնար Հայ
Բրիստոնեային նահատակութիւնը և Վարդանանց դիմադրութիւնը: Խաւարին՝
դիւրակեցութեան վարժուած աչքե՛րն են միայն որ անձնանուիրումի լոյսը
չեն կրնար դիտել: զԱստուած՝ Յիսուսի ապրումին, անձնագոհութեան,
խոնարհութեան և Խաչելութեան մէջ կը տեսնենք, Անոր ընդմէջէ՛ն կը
դիտենք և Անոր միջոցո՛վ կը ճանչնանք: Նախա-Քրիստոս հեթանոս
հաւատալիքներն ու իմաստասիրութիւնները չի կրցա՛ն ըմբռնել Խաչին
(գոհողութեան) ուժականութիւնը: Հեթանոսներու առաքեալ Պօղոս կը գրէ
Հռոմի Բրիստոնեաներուն ու կը պանծացնէ Խաչը, (Ժառայութիւնն ու
անձնագոհութիւնը) ըսելով.

*«Կորստեան մասնուածներու և հաւար Խաչին ճարդ յիմարութիւն է, իսկ
մեզի՝ փրկուածներու և հաւար՝ Աստուծոյ զօրութիւնը ...Հրեաները նշան կը
հայցեն, իսկ հեթանոսները իմաստութիւն կը փնտռեն, մենք կը Բարոզենք
խաչուած Քրիստոսը ... Որպէս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ
իմաստութիւն»--Ա. Կոր. Ա.18, 22-25:*

Քրիստոսի նմանիլ, Անոր աշխատանքին մասնակցիլ, Անոր խոնար-
հութեան բաժնեկցիլ, Անոր նման համբերող և հանդուրժող ըլլալ աշա-
կերտներու անմտութեան և փառամոլութեան, բացարձակ նուիրում ու
գերբնական սէր կը պահանջէ: Քրիստոսի նման ներել ու սիրել բոլոր

ուրացողներն ու զինվ լինող փախչողները, կրե՛լ է Յիսուսի մահը որպեսզի Անոր կեանքն ալ յայտնուի մեր մարմիններուն մէջ՝ Յիսուսի աշակերտի՛լ կը նշանակէ: Բրիստոսի աշակերտիլ այսօր շատ դիւրացած ըլլալ կը կարծուի:

Պայֆարը բնութեան ամբողջ տարածքին մէջն է: Մրջուններէն սկսեալ մինչեւ մարդկութիւն: Բրիստոսի աշակերտողներէն պահանջուածը *ախոյեանութի՛ւն* է ծառայութեան և անձնանուիրումի մինչեւ որ չարը պարտուի: Այս ոչ թէ պարտականութիւն, հրահանգ կամ հրամա՛ն է, այլ մասնակի՛ց և գործակից ըլլալ է Աստուծոյ: Յիսուս Բրիստոս մեծարեց մարդ արարածը ըսելով Իր աշակերտներուն. *«Դուք է՛ք Իմ վկաներս»:*

Աշակերտիլ Բրիստոսի կը նշանակէ (Ֆէտայի) ըլլալ: Յեղափոխական ազատամարտիկները աւելի գիտակից էին թշնամիին իրագործելի՛ք ահաւոր կոտորածին (հայերը բնաջինջ ընել 1915-ի Մեծ Եղեռնին) քան թէ Անաստուլուի հասարակ հայ ժողովուրդը: Նոյնպէս այսօր, Եկեղեցիներ փոխանակ իրարու դէմ մրցելու թէ ո՞վ է մեծը, պայֆարելու են անաստուածութեան, նիւթապաշտութեան, դիւրակեցութեան, աստուածամերժութեան և մարմնապաշտութեան դէմ:

Բրիստոնեայի մը պարտականութիւնը կը կարծուի ըլլալ՝ միայն Եկեղեցի երթալ, մոմ մը վառել, Ս. Գիրք կարդալ և քարոզ մտիկ ընել:

20-րդ Դարու մէջ *«Բրիստոսի մահը կրել»* գրեթէ չի մասնանշուիր: Ոչ-կղերական (աշխարհական հաւատացեալ)ի մը մտածումին մէջ, Բրիստոսի համար *աշխատիլ* (հիւանդտես երթալ, կամ տարիճոսները Եկեղեցի տանիլ) գոյութիւն չունի: Ս. Պատարագի ընթացքին աղօթողներ կ'երգեն ըսելով. *«Եկեղեցին մի անձ եղեւ»*, որ կը նշանակէ "ես" առանձինն գոյութիւն չունիմ, այլ *հաւաքականութեա՛ն* մէջ *մա՛ս* մը կը նկատուիմ: Մեր թշնամիները մեզ որպէս *անհատ* չճանչցան, այլ *հաւաքա՛ն* հայութիւն ու որպէս համայն՛ք ու որպէս ամբողջութի՛ւն ջանացին բնաջնջել մեզ:

Բրիստոնեային հաւաքական ու եղբայրակա՛ն հասկացողութիւնն ու զգացութիւնը *«Աստուծոյ զօրութիւնն ու Աստուծոյ իմաստութիւնն* է հաւատացեալներուն (Եկեղեցիին) մէջ: Բրիստոսի Յարութեան տօնապատարութիւնը եթէ միայն Եկեղեցի երթալ է, համադրամ ճաշկերոյթ կամ ուտել ու խմել է, Եկեղեցին կորսնցուցած կ'ըլլայ իր տեսիլքն ու զօրութիւնը: Աստուծոյ զօրութիւնը կը ճանչցուի միայն Անոր *Ժառայութեան* գործընթացքին մէջ: Բրիստոնեայի մը ամբողջ կեանքը Յիսուս Բրիստոսի առաքելութիւնը կատարելու *կամաւո՛ր* աշխատանք մը ըլլալու է: Այդ կամաւոր գործադրութեան ընդմէջէ՛ն աշխարհ պիտի տեսնէ Բրիստոսի փառապսակ Յարութիւնը: Մոյն պատճառաւ առաքեալը կ'ըսէ.

**«Հրեաները նշան կը հայցեն, իսկ հեթանոսները
իմաստութիւն կը փնտռեն, մենք կը
բարոզենք խաչուած Երիստոսը»:**

Խաչեալ Երիստոսը բարոզելու ճանապարհը Պօղոս առաքեալ համոզիչ կերպով կը նկարագրէ, ըսելով. «*Երիստոսի հետ խաչը ելալ, այլեւս կենդանի եմ. ոչ թէ ես, այլ իմ մէջս կենդանի է Երիստոս*»: Այս ապրող ու կենդանարար Երիստոս պիտի յարուցանէ նաեւ Ձինք սիրող և Ձինք ցոլացնող հաւատացեալները:

Սուրբ Չատիկը պատմական դէպք իրականութեան՝ Երիստոսի փառապանծ Յարութեան հրապարակագրութիւնն է, Անոր, մեռելներու վրայ տարած, յաղթանակումն է: Սուրբ Չատկուայ օրը, մեզի բրիստոնեաներու համար, մե՛ր ալ *յարութեան գրաւականն* է: Յարութեան խոհերով և սպասումներով կը թեւակոխենք այն մեծ օրը երբ մեր պապերն ու սուրբ նահատակները պիտի ելլեն իրենց մահաբունեն ողջունելու Յարութեան լուսապայծառ արջալոյսը:

Երիստոս Իր Մարդեղութեամբ, ճաշակած եղաւ մարդկային ողբերգութեան ամբողջ տրաման ժողովուրդին հետ Ինքզինք ջաղախելով: Ան անօթեցաւ, յոգնեցաւ, լացաւ, սխալ հասկցուեցաւ, Իր աշակերտներէն մին Ձինք մատնեց, ուրիշը Ձինք ուրացաւ, ապտակուեցաւ, անարգուեցաւ և սպաննուեցաւ: Երիստոս ինչո՞ւ այս բոլոր ցաւերն ու անարգանքն ու նախատինքն կրեց: Միթէ Երիստոս սկարամի՞տ մըն էր, ցնո՞րք մը կը հետապնդէր, կամ անձնատեա՞ց մըն էր: Ո՛չ երբեք, Ան եկաւ իրագործելու Հօր Աստուծոյ Կամքը և յայտնելու Անոր մարդասիրութիւնը:

Յիսուս Երիստոս եկաւ աշխարհ պայքարելու չարին դէմ ու ի պահանջեալ հարկին կեանքն իսկ գոհելու որ այդ պայքարամարտը վերջանայ յաղթանակով՝ մարդոց փրկութեամբ: Երիստոս Իր ուղղափառութեամբ (սիրոյ ու ծառայութեան) ապրումով բացաւ պայքարի հերոսական էջեր: Չկայ աւելի մեծ երջանկութիւն, քան պայքարիլ ու տառապիլ ճշմարտութեան համար: Այդ անձնանուէր պայքարի ընթացքին Ան յայտարարեց ըսելով. «Ես եմ ճշմարտութիւնը, Կեանքը և Ճամբան»: Երիստոս ձեւ ու մարմին, իմաստ ու նուիրում տուաւ հաւատքի պայքարին, ու Իրմէ վերջ պայքարողներուն ալ: Երիստոս կրնար ուրանալ Իր առաքելութիւնը և Ինքզինք նուիրել ուտելու ու խմելու որովհետեւ վաղը մեռնիլ կայ: Մակայն Ան հաւատա՛ց թէ Հայր Աստուած խոստացած էր Ձինք յարուցանել, ինչպէս Պետրոս առաքեալ յայտարարեց Հոգեգալստեան Օրը, ըսելով.

«Անօրէններու ձեռքով փայտի վրայ գամեցիք և սպաննեցիք, Աստուած

յարութիւն տուաւ անոր՝ լուծելով մահուան կապանքները»--Գործք. Բ.23-24:

Յիսուս՝ մարդկութեան հոգին, Իր հոգիին մէջ փոխադրելով կենդանի հաղորդութեամբ միջնորդեց մարդկային դիւրաբեկութիւնը առ Հայր Աստուած ու լիովին կատարած եղաւ Իր առաքելութիւնը:

**«Ինչպէս որ Ադամով ամէնքը կը մեռնին,
այնպէս ալ Քրիստոսով ամէնքը պիտի կենդա-
նանան՝ իւրաքանչիւրը իր կարգին»--ԺԵ.23-23:**

Պօղոս առաքելի վերոյիջեալ համարը ընդհանրապէս կը մեկնաբանուի ա՛յն բացատրութեամբ (աստուածաբաններու կողմէ), թէ որովհետեւ Ադամ անհնազանդ գտնուելով կերաւ արգիլուած պտուղէն, հետեւաբար Աստուած զայն մահուան դատապարտեց: Մենք ալ որ Ադամի սերունդ կը ճանչցուինք, իր պատճառով դարձած ենք մահկանացու:

Վերոյիջեալ բացատրականը կրնայ գոհացուցիչ ըլլալ, բայց պակասաւոր է: Ինչո՞ւ: Որովհետեւ Ծննդոց Գիրքին երրորդ գլխուն 22րդ համարին մէջ Աստուած սապէս կ'ըսէ Ադամի մասին, անոր անհնազանդութենէն յետոյ.

«Ահա Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ՝ բարին ու չարը գիտնալու. և հիմա չըլլայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց ծառէն ալ առնէ և ուտէ ու յաւիտեան ապրի: Ուստի Տէր Աստուած եղեմի պարտէզէն դուրս ըրաւ զանիկա, որպէսզի երկիրը գործէ, ուրկէ առնուեցաւ»:

Ծննդոց Գիրքը գրող հեղինակ մարգարէն երբեք չ'ըսեր թէ Ադամ անմահ էր կամ *յաւիտենակաւ կեանք* ունէր, այլ ընդհակառակ որոջ կերպով կը գրէ, թէ Ադամ չունէր յաւիտեան ապրելու իրաւունքը երբ Աստուած ստեղծեց զինք: Ինչո՞ւ չունէրը չենք գիտեր: Սակայն որոջ կերպով կրնանք գիտնալ թէ Ադամ ստեղծուելէն յետոյ տակաւին յաւիտենական կեանք չէր ստացած: Որովհետեւ Աստուած կ'ըսէ. **«Չըլլայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց ծառէն ալ առնէ և ուտէ ու յաւիտեան ապրի»:** Եթէ Ադամ անմահ ստեղծուած ըլլար, Աստուած սոյն խօսքերը պիտի չ'ըսէր:

Աստուած ինչո՞ւ անմահ չի ստեղծեց մեր նախահայր Ադամը, որովհետեւ Աստուած իմաստուն է: Յովհաննու Աւետարանին մէջ կը կարդանք.

Յիսուս «իրեններու ն եկաւ, բայց իրենները չընդունեցին զայն: Իսկ անոնք որ ընդունեցին զայն՝ Իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք կը հաւատան Իր անունին»:
Ա.11-12:

Մեր զաւակները ուսեալ ու համալսարանէ վկայեալ չեն ծնիր, սակայն օժտուած են իմացական և զգայական զարգացման անսահման հնարաւորութիւններով: Կենդանական աշխարհի մէջ միայն մարդ արարածն է որ դաստիարակութեան և զարգացման կարիքը ունի, որովհետեւ սաղմնային վիճակին մէջ չէ ուրուագծուած (program) չէ եղած անոնց նկարագիրը: Մարդ արարածը բոլոր կենդանիներէն աւելի հնարամիտ է և ստեղծագործ, բայց պարտաւորուած է *փաստե՛լ* իր առաքինութիւնը և հաւատարմութիւնը: Ծան մը հաւատարիմ ըլլալը, առաքինութիւն չէ, ո՛չ ալ կարիճին խայթելը՝ չարութիւն, որովհետեւ այդ երկու կենդանիները այդպէս *ուրուագծուած* են: Համայն տիեզերքի մէջ միայն մարդ արարածն է որուն գործադրումները կրնան բարի կամ չար կոչուիլ, որովհետեւ մի միայն մարդ արարածը ունի *ազատ կամք*: Մարդ արարածը պարտաւոր է փաստել իր արժանիքը կամ արժեւորել ձիրքերն ու յատկութիւնները: Բովանդակ Աստուածաշունչ Մատեանին մէջ ոսկեայ թել մը կայ, որ կը զգացնէ մարդկութեան Աստուծոյ բարձրագոյն ծրագիրը մարդ արարածը ստեղծելուն մէջ: Այդ նպատակը *աստուածացնե՛լ* էր մարդ էակը, ինչպէս Յովհաննէս առաքեալ կը յայտնէ իր Աւետարանին նախերգանքին մէջ, ըսելով.

«Իսկ անոնք որ ընդունեցին զայն՝ Իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք կը հաւատան Իր անունին»:

Թէեւ մարդ իր *ազատ կամքով* ընդվզեցաւ և կատարեց իր Բնահաճոյքը ուսելով արգիլուած պտուղէն: Մարդ իր կամքին արտայայտիչն ու տէրն է: Մակայն աստուածային սէրը որ կը գերազանցէ ամէն մեղանչում, հասաւ ազատագրելու մարդը մեղանչումի հետեւանքէն ու վերականգնելու զայն իր արժանաւոր տեղը՝ աստուածային որդեգրութեան: Պօղոս առաքեալ հինգ անգամ կը գործածէ "որդեգրութիւն" բառը, 3 անգամ Հռոմայեցւոց նամակին մէջ ու մէկական անգամ ալ Գաղատացւոց և Եփեսացւոց նամակներուն մէջ: Մարդ էակ բնութեան զաւակն ու բնութեան (հողային) արտադրութիւնն է առաւել ըլլալով կարելիութիւնը ունի նմանիլ Յիսուս Զրիստոսի, որովհետեւ աստուածային ջունչ և հոգի ունի: Պօղոս առաքեալ ինքն է, որ կը

ներկայացնե՞լ "որդեգրութիւն" բառը Բրիստոնէական ըմբռնումին մէջ:

Աստուած ստեղծեց մարդ էակը, սակայն անոր որդեգրութիւնը մարդուն ազատ կամքին թողուց: Մարդ արարածը ի՛նքն պարտի փափաքիլ Աստուծոյ զաւակ ըլլալ թէ ոչ: Եւ որ Կտակարանին մէջ գործածուած "փրկութիւն", "փրկուած" և "փրկուիլ" բառերը, որ կարճ մը հաւատացեալներու բերնին մէջ բլիշէ եղած է, իսկութեան մէջ կը նշանակեն "հողայնութենէ" փոխակերպուիլ ու դառնալ "հոգեղէն": Օրինակ, հողեղէնը մահկանացու է, իսկ հոգեղէնը յաւիտենական: Պօղոս առաքեալ Եփեսացոց Եկեղեցիին գրած նամակին մէջ կ'ըսէ.

«Աստուած որ առատ է ողորմութեամբ, իր մեծ սիրով, որով սիրեց մեզ, մինչ մեռած էինք մեր մեղքերուն մէջ, մեզ կենդանացուց Բրիստոսով (որովհետեւ շնորհով փրկուեցանք)»--Եփես. Բ.4-5:

Փրկութիւնը կամ փրկուիլը (յաւիտենական կեանք ունենալը) *շնորհ* մըն է այսինքն նուէր: Մարդ արարած, աստուածստեղծ ըլլալով հանդերձ, յաւելեալ պարգեւ մը եւս կրնայ ստանալ՝ *յաւիտենական կեանք*, որ կը նշանակէ *որդեգրիլ* ըլլալ Աստուծոյ: Շնորհը Տիրոջ մարդկութեան հանդէպ ունեցած բարեկամութեան գրաւականն է, Անոր անփոփոխ սիրոյն և հրաւերին՝ ապրելու Իրեն հետ համերաջի միութեամբ: Յիսուս Բրիստոսի զօրութեանական առաքինութիւնը՝ **ՍԷՐՆ** է, որ կը պահանջէ Իր հետեւորդներէն: Մեր պապերը յարութեան օրուան հասնելու համար սապէս կ'աղօթէին. *«Երբ թշուառ մարմինս փճանայ ծորի, թո՛ղ իմ մօտս պահուի շնորհիդ օծումը»:*

Ա՛յս յոյսով ու այս հաւատով անոնք փակեցին իրենց աչքերը:

Զկարծուի թէ Աստուած մարդ էակը մահկանացու ըլլալու համար ստեղծած էր: Մարդ, ստեղծագործութեան *գեղեցկագոյնը* եղաւ՝ դառնալով բարձրակէտը անոր: Աստուած Իր չոգւոյն անհունութեամբ կը սիրէ մարդ արարածը, սակայն մարդ առանց Գերբնականին կը պարպուի, կ'անջգանայ և կ'իմաստագրուի: Յովհաննու Աւետարանին մէջ կը կարդանք. *«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»:*

Հաւատացեալները կը տօնեն Սուրբ Զատիկը ոչ որովհետեւ Բրիստոս Յարութիւն առաւ, այլ հաւատալով Անոր փառապանծ Յարութեան, մահկանացու մարդն ալ յարութիւն պիտի առնէ գերեզմանէն: Բրիստոսնութիւնը՝ *Յարութեա՛ն կրօնքն* է: Յարութեան խոհերով և սպասումներով կ'ողջունենք մեր Տիրոջ Ա. Զատիկը: Հայերը ապրեցան Խաչին շուքին

տակ և հաւատքի լոյսին մէջ սպասելով յարութեան ժամուն: Յարութեան խորհուրդէն կը ծնի տեսիլքը յաւիտենական կեանքի: Աշակերտները ճանչցան իրենց Վարդապետը մի միայն Անոր ծառայութեան, խաչելութեան ու Յարութեան ընդմէջէն: Բրիստոսի ամենայնազիջ աղերս աղօթքին մէջ կը տեսնենք Աստուծոյ սէրը հանդէպ տառապակոծ մարդկութեան:

«Յաւիտենական կեանքը այս է՝ որ ճանչնան Քեզ միակ ճշմարիտ Աստուած, և ճանչնան Յիսուս Բրիստոսը, զոր Դուն դրկեցիր»--Յով. ԺԷ.2-3:

Լոյսեր հագած նազովրեցին ճանչցուց զԱստուած մարդկութեան Իր ծառայութեամբ, խաչելութեամբ ու Յարութեամբ: Իսլամութիւնը ճանչցուց իր ալլահը սուրով և բռնատիրութեամբ: Հրեաները ամբարտաւանութեամբ և իրենք զիրենք գերիվեր ցոյց տալով: Բրիստոս կ'արգիլէ այսպիսի կրօնափոխութիւնը ու կ'ըսէ.

«Վա՛յ ձեզի՝ դպիրներուդ և կեղծաւոր Փարիսեցիներուդ, որ ծով ու ցամաք կը շրջիք մէկ հատիկ նորադարձ ջահելու համար, և երբ գտնէք՝ ձեզմէ կրկնապատիկ աւելի գեհե՛նի որդի կը դարձնէք զայն»--Մատ. ԻԳ.15:

Անսպառ շնորհ Բրիստոս ամպածրար բարձունքներու վրայ չտուաւ Իր պատգամները, Սինայի կայծակներն ու Եդիպի վրէժխնդիր սուրը չեղան Իր գէնքերը, այլ հեգուլթիւնը, բարութիւնը, սրբութիւնը, արդարութիւնը, զոհաբերութեան ոգին, որոնցմով ապրեցաւ, զորս Բարոզեց և նուիրագործեց Իր Խաչովը: Ահա ա՛յս է ճշմարիտ Աստուածայայտնութիւնը որ յարութեան ջունչ փչեց Իր հետեւորդներուն: Թափուր գերեզմանի Յարութեան լոյսը տակաւ կը լուսաւորէ՝ ամէն մարդ, որ աշխարհ կու գայ:

«Հիմա ձեզի ծածուկ խորհուրդ մը յայտնեմ: Բոլորս չէ՛ որ պիտի մեռնինք. բայց երբ վերջին փողը հնչէ՝ ամէնքս ալ յանկարծ պիտի նորոգուինք ակնթարթի մը մէջ»:

Մտնելոց Յարութիւնը մեզի հաւատացեալներուս կը մատուցուի որպէս *խորհուրդ*:

Պատճա՞ռը, որովհետեւ մարդկային միտքը՝ Գերբնականը ըմբռնելու կարողութիւնը չունի տակաւին: Օրինակ.-- մանուկի մը որբա՛ն ալ սիրաբանութեան մասին խօսիս, չի հասկնար որովհետեւ չափահաս չէ ու

սեռային արթնութիւն չունի: Ծինարարական ի՛նչ բացատրութիւն կամ ուրուագիծ որ ցոյց տաս պարզ աշխարհական մարդու մը, ճարտարապետական կարողցէն բան չի հասկնար:

"Խորհուրդ" բառը թարգմանութիւնն է Յուն. "mysterion" բառին, որ կը նշանակէ ծածկուած կամ թափնուած բան: Լատին եկեղեցին զայն կ'արայայտէ "sacramentum" բառով, որ կը նշանակէ սրբագործում, նուիրականացում: *Խորհուրդը* ըմբռնելի չէ մարդկային զգայարաններով, սակայն տեսանելի է հոգեւոր աչքով՝ հաւատով: "Խորհուրդ" բառին կրօնական և աստուածաբանական իմաստը, կը նշանակէ անտեսանելի բաներու յայտնութիւնը.

Նոր Կտակարանին մէջ "Խորհուրդ" բառը ընդհանրապէս կը նշէ աշխարհի փրկութեան համար Աստուծոյ ծրագիրը, որ նախապէս ծածուկ էր, չէր յայտնուած մարդոց, սակայն Քրիստոսով և Ա. Հոգիին միջոցաւ յայտնուեցաւ -- չն. ԺԶ.25-26: Կող. Ա.26-27:

«Ըստ այն յայտնութեան խորհուրդին որ ի յաւիտենից պահուած էր լուրթեան մէջ իսկ այժմ յայտնուած է մարգարէական Գրուածքներուն միջոցով մշտնջենաւոր Աստուծոյ հրամանին համաձայն և ծանուցուած բոլոր հեթանոսներուն, հաւատի հնազանդութեան համար»:

Այն ինչ որ հեթանոսներ փնտոեցին իրենց ոլորապտոյտ պարերու ու թափնագիտական արարողութիւններու մէջ, Աստուած բացայայտեց Քրիստոս Յիսուսով Զինք անձնանուէ՛ր սիրողներուն: Լուսեղէն Յիսուս ըսաւ Իր սիրելի աշակերտներուն. *«Իմք պէտք է գիտնա՛մ Աստուծոյ արքայութեան գաղտնիքները, բայց ուրիշներուն առակներով կը յայտնուի»*. Սուրբ Պատարագի սկզբնաւորութեան մեր երգած "Խորհուրդ Խորինը"

Քրիստոսի մարդեղութիւնն է: Խորհուրդ բառը կը նշանակէ, թէ Բրիստոնեայ անհատը յարաբերութեան մէջ կը մտնէ անտեսանելի, անշօշափելի, բայց *զգալի* և *իմանալի* հոգեկա՛ն ուժերու և կարողութիւններու հետ:

1. հաւատացեալը կը մտնէ Քրիստոսի ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և հոն կը մնայ, կ'ամրանայ ու կը վայելէ հոգեկան շնորհներ:
2. խորհուրդով Բրիստոնեան կ'ապրի երջանկութիւնը Աստուծոյ ներկայութեան:
3. խորհուրդը հանդիպումն է Աստուծոյ և մարդու:
4. Քրիստոս է հեղինակը իւրաքանչիւր խորհուրդին:

**«Զորմէն անբաժանելին մտորին մէջ կը ծնի..
երկինքի և երկրի մէջ անբաւելի Աստուածութիւնը
Իւանձարուրի մէջ կը փաթթուի» (Շարական):**

**«Բոլորս չէ՛ որ պիտի մեռնինք. բայց երբ վերջին
փողը հնչէ՛ ամէնքս ալ յանկարծ պիտի նորոգ-
ուինք ակնթարթի մը մէջ»:**

Որքան մօտենաս հաւատքի սրտին, այդքան կ'ըմբռնես կեանքին խոր-
հուրդը՝ զԱստուած:

**«Մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը՝ որ երեւցաւ
մարմինով, արդարացաւ հոգիով, յայտնուեցաւ հրեշ-
տակներուն, քարոզուեցաւ հեթանոսներուն մէջ, հա-
ւատալի եղաւ աշխարհի մէջ և վերացաւ փառքով»--
Ա. Տիմ. 4.16:**

Մտելոց Յարութեան չհաւատացողներու մեծագոյն դժուարութիւնը կը
կայանայ հող ու փոշի դարձած մահկանացուի մը մարմնին վերա-
կենդանալը: Ես կը ձայնակցիմ այդ անկեղծ անձերուն, սակայն վճռական
եզրակացութիւն չեմ յայտներ: Ինչո՞ւ: Որովհետեւ տիեզերքի գիտութեան
միայն այբենգիմը սորված ենք ու գրադարանին գիրքերը տակաւին չենք
կարդացած...:

Հրաշքներու և գերբնականի *հաւատալը* աւելի նուա՛գ հաւատք կը
կարօտի, քան *չհաւատալը*: Չհաւատալը *ժխտակա՛ն հաւատք* է:
Յարութեան չհաւատալու համար *փաստել պէտք է* թէ մտելոց յարութիւնը
անկարելի դէպք եղելութիւն մըն է: Արդեօք քանի՞ անհաւատներ այդպիսի
դէպք եղելութեան ժխտական գրաւականը ունին...:

Այսօր կարգ մը իրագործումներ որոնք նկատի չենք առներ, քանի մը
տարի առաջ զանոնք պիտի կոչէինք "հրաշագործումներ": Օրինակ.
Թղթակցութեան ու հաղորդակցութեան տարածքին մէջ, այսօր, օրական
բազմաթիւ անգամներ, ջօջափելի ու տեսանելի բաները կը հիւլեացնենք, կը
փոշիացնենք ու անտեսանելի ու անջօջափելի դարձնելով զանոնք
կ'ուղարկենք հազարաւոր մղոն հեռուներ: Ակնթարթի մը մէջ սոյն արդ-
մացած անջօջափելի ու անտեսանելի դարձած հիւլէները "fax" մեքենայի
միջոցով կրկի՛ն կը դառնան ջօջափելի ու տեսանելի նամակներու...:

Սոյն դէպք իրագործումները որքա՛ն ալ բացատրուին, կը մնան

անըմբռնելի ու կը յարուցանեն առաւել հարցումներ: Մարդ էակին *ստացակա՛ն* հնարամտութիւնը եթէ կարելիութիւն ունի ստեղծելու գործիք մը, որ ջօջափելի ու տեսանելի իրերը հիւլէացնել ու զանոնք կրկի՛ն ջօջափելի ու տեսանելի դարձնել, ինչո՞ւ պիտի չհաւատամ հնարամտութիւնը պարզեւող Աստուծոյ անսահման կարողութեան:

Ֆաֆս գործիքը շատ չնչին մեքենայ մըն է բաղդատութեան դրուելու Աստուծոյ արարչագործ հրաշագործութիւններուն հետ: Բայց որովհետեւ մարդկային հասկացողութիւնը փո՛հրը, պզտիկը կ'ըմբռնէ ինչպէս ճարտարապետութեան "մաքէթ"ը, պարտաւորուեցայ "Ֆաֆս" մեքենան օրինակ բերել: Եգիպտական բազմաթիւ մեքենական վաւերագրեր մատչելի դարձան միայն 1822-էն յետոյ երբ Շամբոլիոն յայտնագործեց անոնց ընթերցման բանալին: Հին Կտակարանին մէջ յաճախ կը հանդիպինք հետեւեալ աստուածաբարբառ արտայայտութիւններու.

«Ես եմ Արբահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը»:

Ի՞նչ կը նշանակեն վերոյիջեալ խօսքերը: Միթէ Աստուած մեռելաթա՞ղ է կամ գերեզմանի Պահապա՞ն, մեղա՞յ, մեղա՞յ: Մեզի՛ մարդ արարածներուս համար վերոյիջեալ նահապետները մեռած ու փոջիացած ըլլալ կը կարծուին: Իսկ Աստուծոյ համար հիւլէացած են, չեն կորսուած, տիեզերական համակարգիչին մէջն են ու կնփուած "SAVE" նշանով: Աստուած Իր ուզած ժամուն մէկ հրամանով կամ խօսքով, զանոնք կրնայ վերականգնել՝ դարձնել ջօջափելի, տեսանելի ու կենդանի: Ստուերներու տեղ՝ բուն ճշմարտութիւնը ճառագայթող Քրիստոս, վերոյիջեալ համարը լուսաբանեց Իր աշակերտներուն ըսելով.

***«Աստուած մեռելներուն Աստուածը չէ, ալ՝ ողջերուն»:
«Երբ տեսնէք որ Արբահամ, Իսահակ, Յակոբ և բոլոր մարգարէները Աստուծոյ թագաւորութեան մէջ են»:***

Աստուած է ստեղծող Արարիչը ամբողջ տիեզերք համակարգին, մեր աչքով երեւցածներուն ու նաեւ չերեւցածներուն: Ոչխարներու մտայնութեան նման մեզ հովուող ու խոտաւէտ մարգագետին տանող Մեծ Հովիւին, ոչխարամիտ չափանիջ չտանք: Ան Հովիւ է ու մենք ոչխարներ միայն:

Ինչո՞ւ հաւատալ ու չտարակուսիլ:
Մեր ծանօթներէն Բանի՞ անձեր կը սիրեն *կասկածոտ* բարեկամներ

ունենալ: Որո՞նց հետ կ'ուզենք բարեկամութիւն մշակել,
կասկածո՞տ անձերու հետ, թէ մեր խօսքին հաւատացո՞ղ ու վստահող
անձերու հետ: Բարեկամութիւնն ու մտերմութիւնը կը ստեղծուին
միայն *փոխադարձ վստահութեամբ*: Այր ու կնոջ միջեւ երբ
հաւատարմութեան կասկած մտնէ, այդ միասնականութեան հրաժեշտ
կը տրուի:

Կ'ուզե՞ս ճանչնալ զԱստուած, տեսնել Անոր հրաշալիքները,
սրտակցիլ Անոր սիրոյն, առաջնորդուիլ Անոր Հոգիով, վայելել
Անոր ներկայութեան հրճուանքը և ունկնդրել հրեշտակային
երաժշտութեան, հաւատա՛ Աստուծոյ, յանձնուէ՛ Անոր Հայրական
գթութեան ու ողորմութեան, ու վստահէ՛ Անոր անսպառ ու հրա-
շագե՞ղ Սիրոյն:

**«Երբ վերջին փողը հնչէ՝ ամէնքս ալ յանկարծ
պիտի նորոգուինք ակնթարթի մը մէջ»:**

Զնանալէ արթնցող մը չի կրնար գիտնալ թե՛ քանի՞ ժամ քնացած է:
Անոնք որոնք ցերեկը քնանալու սովորութիւնը ունին, երբ արթննան կը
կարծեն թէ յաջորդ օրուան առաւօտն է որ կը դիտեն...: Նոյնպէս ալ
հաւատացեալ նահատակներ և առաջին Դարու բրիտանացիներ երբ արթննան
Տարութեան Օրը, անոնց քնացած երկա՛ր դարերը պիտի կարծուին ըլլալ
ակնթարթ մը միայն:

**«Փողը պիտի հնչէ և մեռելները յարութիւն
պիտի առնեն անեղծ մարմիններով, և մենք
պիտի նորոգուինք»:**

Համաշխարհային երկու պատերազմներու բազմամիլիոն սպաննուած
զինուորներուն համար ամէն տարեդարձին, աշխարհի բոլոր բաղաճներու մէջ,
զինուորական տղանցքներ կը կատարուին ու փող կը հնչուի, սակայն ոչ մէկ
մեռեալ յարութիւն կ'առնէ: Աշխարհի պետութիւնները, իրենց հերոսներն ու
ազատամարտիկները միայն կը յիշատակեն, և այդ ալ որպէս **“Անձանօթ
Զինուոր”** մը միայն:

Ի՞նչ հակապատկեր կը ներկայացնէ մեր Տիրոջ համասփիւռ շնորհը, որ
պիտի յարուցանէ Զինք սիրող հաւատացեալները մահուան բուռէն "անեղծ
մարմիններով": Այսինքն այնուհետեւ *չմեռնելու* պայմանաւ: Զրիստոսի
համար նահատակուած սուրբերն ու անհամար աբսորեալները "Անձանօթ
Վկաներ" չեն, անապատի գայլերէն ու գիշատիչ թռչուններէն յոշոտուած, կեր
դարձած ու աւազի տակ կամ ջուրի մէջ կորսուած ու անյայտացած թշուառներ

չեն: Անոնց իւրաքանչիւրը փրկուած ու ամենագէտ Աստուծոյ Մտփին ու Արտին մէջ պաշտպանուած "օրհնեալներն" են: Զրիստոսի համար իւրաքանչիւր հաւատացեալ ո՛չ թէ անդիմագիծ թի՛ւ մըն է, այլ՝ *անու նով* ճանչցուած սիրելի մը:

Աստուած **"ՓՈՂԻ՝ ՀՆՉՈՒՄՈՎ"** պիտի յարուցանէ Իր հաւատարիմները: Ինչո՞ւ փողի հնչումով ու ո՛չ լարային գործիքով մը: Որովհետեւ փողի հնչումով Աստուած Իր կենդանարար ծունչը պիտի փչէ ինչպէս որ փչեց մարդ արարածին ստեղծագործութեան: Անկապտելի զօրութիւն Զրիստոս Իր Յարութենէն վերջ իր առաջին այցելութեան, ըսաւ աջակերտներուն.

«Խաղաղութի՛ւն ձեզի. ինչպէս որ Իմ Հայր Զիս դրկեց, Ես ալ ձեզ կը դրկեմ: Եւ երբ այս ըսաւ՝ փչեց անոնց վրայ ու ըսաւ. Առէ՛՛ք Սուրբ Հոգին»:

Աստուած Իր զօրութիւնը *փչելով* կու տայ: Մարդիկ պարզապէս կը ջանան կապկել զԱստուած, իրե՛նք ալ կը փչեն փող սակայն մահկանացու մարդու շունչը պարապ (զուր) շունչ է ու չի կրնար մեռածները կենդանացնել:

«Մեր այս եղծանելի բնութիւնը պէտք է անեղծ բնութեան փոխուի, այս մահկանացու բնութիւնը պէտք է անմահ բնութեան փոխակերպուի»:

Պօղոս Առաքեալ վերոյիշեալ խօսքերով կը ջանայ հիմնովին փոխել Արեւելեան ու Արեւմտեան ծուռ կամ մոլար հանդերձեալ կեանքի հաւատալիքները: Արեւելեան "վերամարմնացում"ի վարկածին մէջ մարդու եղծանելի (մահկանացու) բնութեան, անեղծանելի դառնալու աստուածային արարքը չի յիշուիր: Իսկ Արեւմտեան (Յուն. Հռոմէական) տեսութեան մէջ մեռելոց յարութիւն բնաւ չկայ: Արեւմտեան հաւատալիքներու բարձրագոյն ակընկալութիւնը "ստուերային գոյացութիւն" մըն էր ներաշխարհի հերոսներու միասնականութեան հետ:

Զրիստոսի պանծալի ու յաղթական Յարութիւնն էր, որ մարդկութեան շնորհեց գոյատեւութեան յոյսը, թէ մահը վախճան մը չէ՛, ապրումի աւա՛րտ մը չէ, կեանքին սպառումը չէ՛, այլ միջոցառում մըն է, "ննջել" մը մրափ մըն է: Մարդ արարած միջոտ *արթննալու* յոյսով կը բնանայ: Այս անթառամ **ՅՈՅՍ**-ին համար է, որ Բրիստոնեան կ'ապրի, կը գոհուի, կ'անարգուի ու ի հարկին կը նահատակուի:

Ֆրանսական Յեղափոխութիւնը սկսաւ "Մարտէյէզ" ֆայլերգով :
Ֆրանսական բանակի մարտական երգը յօրինեց **Ռուժէ-դը-Լիլը** 1792 թուին:

Հայկական "Մեր Հայրենիք"ն ու "Մարտեյեզ" ֆայլերգը երբ հնչեն՝ բոլոր նաստղները ոտֆի կը կանգնին: Իսկ նահատակներու ու մարտիրոսներու յարութեան առաւօտուն երբ փողը հնչէ՝ բոլոր սուրբ հաւատարիմներ դուրս պիտի գան իրենց գերեզմաններէն, տիեզերք իր ամբողջութեամբ պիտի թնդայ ու որոտայ երգելով սուրբերու՛ ֆայլերգը.

**«Ո՞ւր է, մա՛հ, քու յաղթութիւնդ.
ո՞ւր է, դժոխք, քու խայթոցդ.»:**

Յիսուս Մանուկի Ս. Ծնունդին հրեշտակապետն ու երկնային խմբերգը թնդացուցին համաստեղութիւնը սրբազան համերգութեամբ: Զատկի առաւօտուն, Բաղձրահունչ աւետիսը.

**«Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք:
Հոս չէ՛ Ան, Յարութի՛ւն առաւ.»:**

Հրեշտակին Աւետաբեր լուրը ուժգնօրէն յուզեց և սթափեցուց խաչեալ Բրիստոսը փնտրող կիները: Անոնք զգացի՛ն ու ապրեցա՛ն իրենց կեանքի ամենացայտուն հոգեկան վերիվայրումներն ու ցնցումները տարուած պանծալի Յարութեան յաղթանակին դիմաց:

Բրիստոսը հետազօտող ու որոնող անձերը, որոնք մեծ զոհողութեամբ եկած էին գերեզման, զմոսելու համար Յիսուսի մարմինը, հաւատացի՛ն Անոր Յարութեան: Ո՛չ որովհետեւ գտան թափուր գերեզման և աւետող հրեշտակ, այլ որովհետեւ կը *սիրէին* իրենց Տէրը՝ Բրիստոս Փրկիչը:

Այսօր ալ անհամար "գիտնականներ", "աստուածաբաններ" և ակադեմական սեպուած տիտղոսակիրներ կը փնտռեն Բրիստոս մը: Կը փնտռեն Զայն *մագաղաթներու տառերու* ն մէջ, գտնել ու տեսնել կ'ուզեն Զայն պատմական անհիմն հեղինակներու հետքերուն մէջ: Սակայն աւա՛ղ չեն գտներ ու չեն տեսներ, որովհետեւ անոնք Զայն չե՛ն *սիրեր*:

Հրեշտակները Բրիստոսի Յարութիւնը չաւետեցին ֆահանայապետներուն, ոչ Պիղատոսին ու ոչ ալ Հերովդէս թագաւորին, այլ համեստ, Զայն սիրող ու Անոր սպասաւորո՛ղ կիներուն: Աջխարհի մեծերը, գիտնական կոչուածները կը փնտռեն Բրիստոսը ո՛չ թէ հաւատալու ու երկրպագելու Անոր, այլ Զայն զմոսելու՛, Զայն անհոգի թանգարանայի՛ն դարձնելու համար: Տուցադրելու համար Զայն որպէս *պատմական* դէմք մը համահաւասար Ճիւղ Հերովդէսի, Բինախնդիր հոռմայեցի կեսարներու կամ անգութ ու դաւաճան արեւելքի մարգարէի մը:

Հրեշտակներու աւետումէն վերջ այս չորս ֆաջագուն կիները ապշահար

ու սարսափած ելան գերեզմանէն ու գացին փոխանցելու Տիրոջ Յարութեան լուրը աշակերտներուն: Բայց հազիւ պարտէզին մուտքին մօտ, Մարիամ Մագդաղենացին կանգ առաւ կարծես գերբնական հոսանքէ մը բռնուած: Ինքն ալ չէր գիտեր թէ ինչո՞ւ կանգ առաւ: Կարծես յուզում մը, հաճելի զգայնութիւն մը կը յառաջանար իր ներաշխարհէն ներս: Յանկարծ ետ դարձաւ և տեսաւ Անծանօթ մը իր մօտ, բայց չճանչցաւ Ջայն: Զրիստոս կ'երեւի՝ մեզմէ իւրաքանչիւրին, բայց մե՛նք եմք որ չենք ճանչնար Ջինք: Անծանօթը որ պարտիզպան մը ըլլալ կը կարծուէր, Բնօջութեամբ և խանդաղատանքով խօսեցաւ ու հարցուց անմխիթար հոգեմաջին.

«Ինչո՞ւ կու լաւս ո՛վ կին, զո՞վ կը փնտես»:

Մարիամ նախ չուզեց խօսակցիլ այս օտարական կարծուած Մարդուն հետ, սակայն Անծանօթին արջալոյսին պէս Բնօյջ ձայնը դպաւ իր հոգւոյն լարերուն: Յաւատանջ ու արցունքախօս ձայնով մը ան ըսաւ արեւին լոյսին մէջ կանգնած Մարդասէրին.

«Կու լամ որովհետեւ Տէրս առեր տարեր են ասկէ և չեմ գիտեր ո՛ւր են դրեր: Տէ՛ր, եթէ դու ն վերցուցած ես զայն՝ ըսէ՛ ինձի թէ ո՛ւր դրած ես, որ ես առնեմ զայն»:

Անծանօթ Պարտիզպանը տեսնելով ջերմ անկեղծութիւնը և միամիտ մանկութիւնը Մարիամին, բառ մը միայն պատասխանեց, անուն մը լոկ, բայց սիրոյ և յուզումի մը ջեշտով: Բառ մը միայն լսուեցաւ որ ջատ անգամներ իմացած էր, սակայն այս անգամ դպչող ու անմոռանալի ձայնով զարկաւ իր ականջի լարերուն ու հոգւոյն.

«Մ ա թ ի ա՛մ»:

Մարիամ անուան ձայնին Բնօջութիւնը կարծես եկաւ իրեն խոր դարերու անմահ երաժշտութենէն: Մարիամ ընդոստ արթնցաւ, որովհետեւ գտած էր իր կորուսածը: Ան ինքզինք նետեց այն Ոտքերուն որ ամիսներ առաջ լուացած էր ապաշխարանքի արցունքներով ու հիմայ կրկին կը լուար ուրախութեան արցունքներով, ու հոգեկան պոթկումով աղաղակեց, ըսելով.

«Ռաբբունի՛: Վարդապե՛տ»:

Ու պինդ սեղմեց ու համբուրեց այն Ոտքերը, որ դեռ կը ցուցնէին կրկին կարմրութիւնները գամերուն:

Յիսուս ըսաւ անոր.

**«Աի՛ մօտենար ինձի, բանի որ դեռ չեմ ելած
դէպի իմ Հայրս. այլ գնա՛ դու ն իմ եղբայր-
ներուս ու ըսէ՛ անոնց թէ՛ ես կ'ելլեմ դէպի
Իմ Հայրս և ձեր Հայրը, դէպի իմ Աստուածս և
ձեր Աստուածը»:**

Յարուցեալը իսկոյն Բաշուեցաւ ու աներեւութացաւ: Ո՛չ թէ անյայտացաւ, այլ մենք մեր հողայնութեան պատճառաւ անկարող ենք տեսնել զայն եթէ Ան Ինքզինք չի յայտնէ մեզի:

Մարիամ Մագդաղենացին, ոչ աշակերտ էր ու ոչ ալ տասներկուսէն մէկը, այլ սպասաւորող կհներէն մին, որ համեստօրէն նուիրած էր իր ծառայութիւնը Բրիստոսի միաբանութեան: Ան չէր փնտրած ո՛չ տիտղոս, ո՛չ մեծութիւն ու ոչ պաշտօն, այլ միայն ծառայելու թոյտուութիւն:

Յարուցեալ Տէր Յիսուս Բրիստոս, այս անձնանուէր սպասուհիին, շնորհեց մեծագոյն հանդիսական պաշտօնը՝ Իր Յարութեան աւետարանչունհին ըլլալ: Երանելի՛ Մարիամ Մագդաղենացի որ ստացած ես Բրիստոսի Յարութեան առաջին վկայուհիի դերը:

Յիսուս Բրիստոսի Խաչելութիւնը թէեւ սաստիկ ցնցեց երկինքն ու երկիրը կայծակներու որոտումովն ու արեւին խաւարումովը, սակայն Անոր պանծալի Յարութիւնը եղաւ նման այգալուսող Բնիկը արջալոյսի: Բրիստոսի Յարութիւնը կարիք չունի ցնցելու տիեզերքի գօրութիւնները: Տիեզերք ականատես վկա՛ն էր Անոր Յարութեան: Տնցում, պայթում և սթափում տեղի ունենալու էին մարդոց հոգիներո՛ւն, գիտակցութեան և համոզումներուն մէջ: Մարդկային միտքը, անձնաւորութիւնը չի համոզուիր շառաչիւնով, հրետանիի վառօդով, սուրի կամ նիզակի չարչարաններով: Մարդ արարած կը համոզուի մտքի ու սրտի լուսաւորումով: Հրեայ դպիրներ, օրինականներ (փաստաբաններ) ու մտաւորականներ (Փարիսեցիներ) տեսան Նագովրեցի Մարգարէին հրաջքները ու լսեցին Անոր երկնապարար Բարոզները, բայց ատեցի՛ն ու սպաննեցին իրենց ազատարար Մեսիան:

Յարուցեալ ու յաղթական Բրիստոս, աժան (բունի) միջոցառումներով պիտի չհամոզէ՛ր մարդկութիւնը, այլ լոյսի՛ հաղորդականութեամբ, Իր սիրո՛յ ու խոնարհութեամբ պիտի գրաւէր մարդոց սրտերը որոնք պիտի դառնային Իր հաւատարիմ մշակներն ու առաքեալները: Մարիամ Մագդաղենացին հաւատքի բերելէ յետոյ Յիսուս սկսաւ Իր երկրորդ առաքելութեան՝ լուսաւորելու աշակերտներուն հոգիները, որոնք պիտի դառնային Իր ջահակիրները մինչեւ աշխարհի անծանօթ ու խաւար անկիւնները լուսաւորելու:

Էմմաուսի փոշոս ճամբուն վրայ կ'երեւին երկու հետիտան ճամբորդներ որոնք քաղելէ աւելի կը վիճին: Յանկարծ մեր աչքին կ'երեւի երրորդ ճամբորդ մը որ կարծես ականջալուր ըլլալ կը ջանայ վիճաբանող գոյգին: Բալողներէն մին, որուն անունը Կղեովպաս է, իր աչքին պոչով կը նշմարէ ստուերը Անծանօթ քաղողին: Առ ի սովորութիւն կանգ կ'առնեն բարեւելու Ձինք և Ուղեւորը կ'ընկերանայ իրենց: Երկու ուղեւորներուն ալ նոր դէմք մը չէր երեւեր այս Անծանօթը, բայց որքան ալ նայէին՝ չէին կրնար ճանչնալ Ձայն, կարծես իրենց յիշողութիւնը փակուած էր:

Իմաստութիւն Բրիստոս, Իր քաղցր մօտեցումով կը հարցնէ Իր նոր բարեկամներուն թէ ի՞նչ կը վիճէին ճամբուն վրայ: Կղեովպաս զարմանքի ջարժումով մը կը պատասխանէ Յարուցեալին, ըսելով.

«Երուսաղէմի մէջ միայն դո՞ւն ես որ չես իմացած թէ ինչեր կատարուեցան այնտեղ այս օրերուս ... որ կը վերաբերի Յիսուս Նազովրեցիի. որ եղաւ մարգարէ մարդ, հօգօր՝ գործերով և խօսքերով, Աստուծոյ և ամբողջ ժողովուրդի առջեւ, և թէ ինչպէս ... մահուան դատաստանի մատնեցին ու խաչը հանեցին զայն: Մենք կ'ակընկալէինք որ Ա՛ն պիտի փրկէր Իսրայէլը:

«Եւ մեզ զարմացուցին մեր մէջէն քանի մը կիներ, որոնք ըսին թէ հրեշտակներու տեսիլք ալ տեսած էին, որոնք Յիսուսի մասին կ'ըսէին թէ կենդանի է Ան»:

Յիսուս կը դիտէ Իր աջակերտները որոնց դաստիարակած էր երեք տարի, քարոզած Իր "Երանելիները", նախաձայնած Իր մահն ու խաչելութիւնը և յարութիւնը: Բրիստոս Իր անսպառ համբերութեամբ կրկի՛ն կը բացատրէ անոնց ա՛յն ինչ որ պատմած էր բազմաթիւ անգամներ, ըսելով.

«Ո՛վ մարդիկ, որ անմիտ և թուլասիրտ է՝ հաւատալու համար բոլոր այն բաներուն, զոր խօսեցան մարգարէները: Զէ՛ որ Բրիստոս Կէտէ է այդ նոյն չարչարանները կրէր և այնպէս մանէր իր Փառքին մէջ»:

Այս Անծանօթ Ուղեւորին բացատրութիւններէն մագնիսացած չնշմարեցին թէ արդէն հասած էին իրենց գիւղը: Յիսուս այնպէս ձեւացուց, թէ Ինք աւելի երկար ճամբորդութիւն մը ունի ընելիք: Մակայն հրապուրուած այս Անծանօթին բացատրութենէն, հրաւիրեցին ու ստիպեցին Ձայն որ իրենց յարկէն ներս գիշերէ ու յաջորդ օրը ճամբայ դնեն Ձինք: Բրիստոս

մեծամտութիւն չունի: Ան որ Ձինք կը հրաւիրէ, անոր բով կ'իջեւանի:

Կիները երեկոյան ճաշը պատրաստեցին ու ամէնքը բողբոլեցան սեղանին շուրջ ընթրելու: Որպէս յարգանք՝ իրենց իմաստուն Հիւրին, ինդրեցին այս Օտարականէն որ Ինք օրհնէ սեղանը:

«Եւ Յիսուս աննելով հացը՝ օրհնեց, կտրեց ու տուաւ անոնց: Եւ անոնց աչքերը բացուեցան ու ճանչցան. իսկ Ինք անոնց աչքին աներեւոյթ եղաւ: Եւ անոնք ըսին իրարու. "Մեր սրտերն ալ միթէ չէի՞ն ճմուռէր մեր ներսէն, երբ ան ճամբան կը խօսէր մեզի հետ»:

Հեթանոս աստուածներու ձեռքին մէջ կը տեսնուէր հրեղէն նետեր, նիզակներ և ջանթեր, իսկ մեր Տէրը Զրիստոս երբ բարձրացուց և օրհնեց աստուածապարգեւ հացը, Անոր Ձեռներուն մէջ տեսնուեցան *խաչելութեան* գամերուն նշանները: Զրիստոսի վիրաւոր Ձեռները ճեղքեցին անհաւատութեան խաւարը ու փայլատակեցին հաւատքի և յոյսի արջալոյսը:

Հեթանոս աշխարհ ճանչցաւ Աստուած ճշմարիտը ո՛չ որովհետեւ քրիստոնէայ իմաստասէրներ *տրամաբանութեամբ* միայն փաստեցին Անոր Աստուածալայտնութիւնը, այլ՝ *նահատակութեամբ* և անձնագոհութեամբ: Նոյնպէս Եկեղեցին, եթէ չի ցուցադրէ ի՞ր ալ խաչելութիւնը, տառապանքի՞ն ցաւը, աշխարհ պիտի չկարենայ ճանչնայ զԱստուած: Մեզմէ քանիներ՞որ տառապած են Աստուծոյ համար ու քանիներ՞որ գոհուած, ճանչցնելու Զրիստոս Փրկիչը իրենց հարազատներուն: Ի՞նչ են մեր հաւատացեալ ըլլալու նշանները: Եկեղեցւոյ մէջ հանգստաւէտ նստարաններու մէջ Ա. Պատարագը ունկընդրե՞լ: Այո, այդ ջատ մեծ վկայութիւն մըն է, բայց ո՛չ բաւարար: Մարդ արարածը մի միայն *տառապանքով* կը սորվի ու գոհաբերելով կը վկայէ:

Յիսուս ինչո՞ւ անոնց աչքին աներեւոյթ եղաւ: Լաւագոյն չէ՞ր որ Ան գիշերէր անոնց հետ ու շարունակէր Իր բացատրութիւնները: Ո՛չ, Զրիստոս ճամբու երկայնքին պատմած էր ի՞նչ որ կարելի էր հաւատալու: Ան ժամանակ չունէր ջատախօսելու: Այժմ հաւատացեալներո՞ւ ժամն էր վկայելու և խօսելու իրենց Տիրոջ Յարութեան մասին: Հաւատացեալին գործը միայն եկեղեցիէ ուրիշ եկեղեցի երթալ ու զանազան ֆարոգներ մտիկ ընել չէ՛: Հաւատացեալը նախ տեսնելու է Զրիստոսը ի՞ր տան մէջ, իր ծառայութեան ու նուիրումին մէջ, ու ապա վկայելու է իր տեսածը: Զրիստոս ձանձրացած է համտեսող ու բազկաթոռեան հաւատացեալներէ, Ան կ'ուզէ որ մենք դառնանք վկայո՞ղ ու գործօ՞ն քրիստոնէաներ:

Յիսուս Մանուկին Մնուկը տեղի ունեցած էր Բեղլեհեմի ախոռի մը մէջ ու Անոր Յարութեան հիւրասիրութիւնը տեղի ունեցաւ Էմմաուսի խրճիթի

մը մէջ: Զրիստոս Իր լուսեղէն Մարմինով ու յաղթական Յարութեամբ մահէն կեանքի ու կրաւորական կեանքէն առատահոս ապրումի փոխակերպած էր Կղէովպասն ու անոր ընկերը: Յարուցեալին տեսանելի ու շօջափելի ներկայութիւնէն խանդավառ, փոխանակ գիշերելու իրենց տան խրճիթը, անոնք նետուեցան իրենց եկած ճամբան և ուղղուեցան դէպի միւս աջակերտները: Ոչ թէ հոն հանգչելու ու բնանալու, այլ ակետելո՛ւ իրենց Վարդապետին Յարութիւնը: Դէպի Երուսաղէմ ճամբուն վրայ միայն մէկ նիւթ կը խօսէին ու կը կրկնէին իրարու, ըսելով.

«Արթէ մեր սրտերը չէի՞ն ապրեր մեր ներսէն, երբ ան ճամբան կը խօսէր մեզի հետ. և ինչպէ՞ն կը բացատրէր մեզի Գրուածքները: Ինչո՞ւ չկրցանք ճանչնալ Ջիւնը այն ատեն, ինչո՞ւ չկրցանք»: Եւ ապշահար իրարու կը նայէին անխօս ու ամօթահար.

Կէս գիշերը անց առանց ջունչ առնելու հասան աջակերտներուն: Աջակերտներէն ոմանք արթուն էին իսկ ուրիշներ բնացած: Երբ զարկին դուռը, աջակերտները մեծ զգուշութեամբ բացին, ու անմիջապէս կղպեցին դուռը հրեաներուն վախէն: Հասնող երկու աջակերտներուն վկայութիւնն ու խանդավառութիւնը ակելի ապշութեան մատնեց մնացեալները, փոխանակ զիրենք հաւատքի բերելու: Կիներուն վկայութիւնը, թէ հրեշտակներու տեսիլք տեսած են ու Մարիամ Մագդաղենացիին վկայութիւնը, թէ ինք Տէրը տեսաւ, ազդեցութիւն չէր գործած: Այս երկու աջակերտներուն վկայութիւնը թէեւ սարսեց իրենց յամառ կեցուածքը սակայն համոզիչ չէր: Աջակերտներուն բազմութիւնը չէր կրնար ընդունիլ, որ իրենց Վարդապետը եթէ Յարութիւն առած է, ինչո՞ւ միայն անհատներու կ'երեւի ու ո՛չ բոլորին միատեղ: Զրիստոս ինչո՞ւ նախասիրութիւն կ'ընէ, և ինչո՞ւ համար հեռաւոր Էմմաուս գիւղի խրճիթին մէջ կը յայտնէ Ինքզինքը: Ի՞նչ է այս խտրութիւնը:

Աջակերտները կը հաւատայի՛ն մեռելոց յարութեան, որպէս վերջին Դատաստան, բայց ո՛չ իրենց Վարդապետին: Այդ օր իրենց միտքը խճողուած էր աննախընթաց հարցումներով որոնք կը խեղդէին իրենց հոգին:

Վարդանք իրենց մտքին հարցումներն ու հետեւինք իրենց դատողութեան:

1. Յիսուս եթէ իրապէս յարութիւն առած է, ըսել է թէ Ան ճշմարտապէս ԱստուածՈրդի՞ է: Բայց կարելի՞ է ըմբռնել, որ Աստուած թող տայ որ Իր Որդին սպաննուի ու մեռնի այն ալ եղերական ու ամօթալի մահով:
2. Եթէ Աստուած կարող է յարուցանել Իր Որդին ու յաղթել մահուան, ինչու կայծակնաբոց ջանթով մը չէր մահացուցած Պիղատոսը՝ Իսրայէլի բռնատէրը:
3. Ինչո՞ւ թոյլ տուած էր Հռոմէացի հեթանոս զինուորներուն որ խաչեն Իսրայէլի Մեսիան, ու չէր փրացուցած անոնց բազուկները:

4. Ի՞նչ բարի նպատակի համար թող տուած էր, որ Իր Որդին Բաշխուի փողոցներու մէջ ու անարգուի մեղաւորներու կողմէն:

Այսպէս կը տրամաբանէին աշակերտներէն ոմանք իրենք իրենց մէջ ու չէին կրնար եզրակացութեան յանգիլ ու շուարած էին: Ոչ կ'ուզէին հաւատալ ու ոչ ալ ուրանալ վկայողներուն տեսածները: Աշակերտները՝ մինչեւ Հոգեգալուստ չըմբռնեցին թէ Յիսուսի մահը *փրկարար՝ը* մահ է, *հաշտեցնող*՝ մահ է, մահ մը որ վերջ պիտի դնէ մահուան:

«Անտուած Իր Որդիին մահովը մեզ Իր հետ հաշտեցուց երբ տակաւին թշնամի էինք Իրեն, հիմա որ ա՛լ հաշտուած ենք՝ որքա՞ն աւելի վստահութեամբ կրնանք ըսել՝ թէ պիտի փրկուինք Զրիստոսի կեանքով»--Հրով. Ե.10:

Աշակերտները որպէս սուգի, անորոշութեան ու պապանձումի, սմբած ու անօթի, սպասումի մը երազը կ'ապրէին: Կէս գիշերէն վերջ երբ ամբողջ երուսաղէմ խաւարի ու լուռութեան մէջ էր, փայլատակեց գերբնական լոյս մը, ու այդ լոյսին մէջէն երեւցաւ Անսպասելին՝ իրենց Յարուցեալ Վարդապետը, Փրկիչը աշխարհին: Զրիստոս հազիւ երեւցած բոլորին, անոնք լսեցին իրենց ծանօթ Բնիւշ ձայնը:

«Մի՛ վախնաք, խաղաղութի՛ւն ձեզի»:

Լուռութիւնը կը ջարունակէր ու Յարուցեալ Վարդապետը, մի առ մի յուզումնախառն հայեացքով, դիտեց Իր սիրելի աշակերտները յիշելով զանոնք իրենց ինքնատիպ անուններով: Պապանձումն ու շփոթութիւնը այնքան խո՛ր էր, որ ոչ ոք պատասխանեց Զրիստոսի «խաղաղութիւն ձեզի» ողջոյնին:

Փարատելու համար աշակերտներուն պապանձումն ու խուլ լուռութիւնը, Խաչեցեալը հարցուց. «Ինչո՞ւ Խոռված էք, և ինչո՞ւ ձեք սրտերուն մէջ կասկածներ կը ծագին. տեսէ՛ք իմ ձեռքերս ու ոտքերս, որովհետեւ նոյն ինքն ե՛ս եմ: Ծօշափեցէ՛ք զիս և պիտի տեսնէք որ միս ու ոսկոր ունիմ, բան մը՝ որ ոգին չ'ունենար»:

Ասիկա ըսած ատեն երկնցուց Ձեռքերը ու ցոյց տուաւ անոնց որ տեսնեն: Ուրիշներ որ իրենց ապշութենէն դեռ ընկողմանած էին, ցատկեցին ու ծնրադրեցին երկրպագելու Չայն ու տեսան մերկ Ոտքերուն վրայ խորունկ նշանները գամերուն: Աշակերտները կը վախնային դաչելու Անոր որ յանկարծ աներեւոյթ կ'ըլլայ ինչպէս որ երեւցած էր: Անոնք տեսան որ Ինքն

էր, Զրիստոս՝ իր դէմքով, Իր ձայնով ու խաչելութեան անժխտելի հետեւերով: Աջակերտներուն մէջ ամէնէն ամօթահարը Պետրոսն էր, որ թէպէտ պաշտպան կանգնած էր իր Վարդապետին, սակայն երեք անգամ ուրացած էր Զայն: Աջակերտները կը դիտէին իրենց երկնառափ Վարդապետը, սակայն Պետրոս միջոտ գետին կը նայէր:

Զնչելու համար Իր աջակերտներուն վերջին կասկածներն ու վարանումները, Յիսուս հարցուց անոնց.

«Ուտելի՛ք բան մը ունի՞ք հոս»:

Անոնք ալ Իրեն տուին խորոված ձուկի կտոր մը և մեղրի խորիսիս, և Ինք անոնց դիմաց կերաւ ու մնացեալը վերադարձուց: Զրիստոս՝ Իր ուտելովը, դաստիարակեց աջակերտները անոնց հասկցած ձեւով: Մարդ արարածը երկնային լեզուով չըմբռներ, հողաջէն մարդը մի միայն նիւթականով կը հասկնայ: Այդ էր պատճառը Յիսուսի ուտելուն: Ան ցոյց տուաւ իր սիրելիներուն թէ Ինք ուրուական մը չէ՝ երազային ցնորք մը չէ՛, այլ իրաւապէս իրենց Վարդապետը այնպէ՛ս ինչպէս ծանչցած էին Զինք:

Զրիստոսի 12 աջակերտներէն Յուդայ՝ իր վարդապետը մատնելէն յետոյ, ցաւատանջ ու խղճահար իր մեղանչումին համար, գնաց ու ինքզինքը կախեց: Երկուորեակ Թովմաս յուսահատ ու փշրուած երազներուն պատճառաւ լքած էր աջակերտներուն ընկերակցութիւնը: Ան կ'ամչնար որ իր կեանքին երեք տարիները անցուցած էր ունայն ու հետապնդած ցնորական տեսիլքներ աջակերտելով՝ նազարէթի ինքնախաբ մարգարէ մը: Կեանքէն հիասթափուած ու մեկուսացած կը ծրագրէր թէ ի՞նչ կրնար ընել և ուրկէ՞ պիտի սկսէր իր նոր կեանքի ասպարէզը:

Տան դռան անակնկալ ու ջարուանակական զարկը, յանկարծ սթափեցուց զինք իր մտորումներէն: Երբ բացաւ դուռը ի՞նչ անսպասելի այցելութիւն իր ուխտեալ ընկերներէն: Առաջին յանկերգը. «Տեսա՛նք Տէրը, այո, Տեսա՛նք Վարդապետը» աղաղակը երբ լսեց, կարծեց թէ իր ընկերները խելագարած են: Թովմաս միջոտ ինքզինք գերադաս նկատած էր, որովհետեւ ուրիշներու նման Գալիլեացի համեստ ձկնորսներու խումբին չէր պատկաներ:

Մտաւորականի հովեր ունէր ու իր Վարդապետին խաչելութենէն վերջ հաւատքէ պարպուած սնանկ հոգի մը դարձած էր: Խաչին գայթակղութենէն վերջ՝ Թովմաս շատ հեռու էր վերադառնալու հաւատքի, պարզ "ըսի ըսաւ" ներով ու կրկին խաբուիլ: Մանաւանդ շատ վստահութիւն չունէր իր խաբուած ընկերներուն, մանաւանդ Պետրոսին, որ խոստացած էր պաշտպանել իր Տէրը նոյնիսկ իր մահուան գնով: Մանաւանդ բոլորն ալ իրեն նման վախցած ու քախած էին:

Գոռոզ ու հաւատամերժ Թովմաս առանց վարանելու և խպնելու ըսաւ իր ընկերներուն.

«Եթէ Անոր Ձեռներուն վրայ չտեսնեմ գամերուն նշանը և իմ մասներս գամերուն տեղերը չդնեմ ու իմ ձեռքս չմխրճեմ անոր կողին մէջ՝ չեմ հաւատար»:

Ինչ մեծ ու խո՛ր էր Թովմասի անհաւատութիւնը: Ան կ'ուրանայ հաւատքը՝ հոգւոյն գերագոյն աչքը. յետոյ կ'ուրանայ նաեւ նիւթական ու մարմնական աչքը: Ան իր վստահութիւնը դրած է միայն իր *ձեռներուն* վրայ: Կը վախնայ որ նոյնիսկ աչքը զինք կը խաբէ ու կ'ըսէ. «Իմ ձեռքս չմխրճեմ անոր կողին մէջ՝ չեմ հաւատար»: Թովմաս նմուշն է 20րդ Դարու նիւթապաշտ Բաղաբակրթութեան: Անոր բարեկամները ի գուր կը ջանան համոզել զինք հաւատալու թէ իրենց Վարդապետը Յարութիւն առած է ու երեւցած բոլորին, բացի իրմէ, որովհետեւ լքած էր միաբանութեան միասնականութիւնը:

Ութ օր վերջ աշակերտները դարձեալ հաւաքուած են՝ Թովմասն ալ իրենց հետ: Ան թէեւ չէր հաւատար Յիսուսի Յարութեան, սակայն երեք տարիներու բարեկամութեան սիրոյն ջանաց պահել անոնց ընկերակցութիւնը փաստելու համար, թէ որքան սխալած էին անոնք... : Մեծ իրարանց մը կար ու տեղի կ'ունենար վիճաբանութիւն որուն յաղթականն էր Թովմաս: Ան՝ ուսեալ էր, իսկ Գալիլեացիները անուս ձկնորսներ:

Յանկարծ լսուեցաւ երաժշտութեան ձայնի նման մեղեդի մը որ լսելի դարձաւ բոլորին: Այդ երկնագեղ մեղեդին նախաձայնն էր Յարուցեալի երեւումին ու ահա աներեւոյթ եթերի ձայնին մէջէն մարմնացաւ նոյն Ինքն՝ Քրիստոս, որ կանչած էր զիրենք հետեւելու Իրեն: Յաղթական Յարուցեալը պտղոցուց Իր խորաթափանց Աչքերը գտնալու համար *հերոս նիւթապաշտը*: Ան եկած էր Թովմասին համար: Ան չէր կրնար լքել Իր մէկ հատիկ գանուկը որ կորսուի: Քրիստոսի համար Իրե՛ն հաւատացողները "թիւ" մը չեն, այլ "անուն" մը՝ արժեքաւոր անձնաւորութիւն մը և Յիսուս կը կանչէ զանոնք իրենց անունովը, ըսելով.

«Թովմաս. բե՛ր քու մասներդ և դի՛ր այստեղ ու տե՛ս իմ ձեռներս. և բե՛ր քու ձեռնդ ու մխրճէ՛ Իմ կողիս մէջ. անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»:

Խեղճ Թովմաս չհամարձակեցաւ մտոր վերներուն մէջ դնել և ոչ ալ ձեռքը կողին: Բայց խոստովանեցաւ զղջմամբ ու ըսաւ.

«Տէ՛ր իմ և Աստուա՛ծ իմ»:

Մարդեղութեան փրկարար գորութիւն Քրիստոս, խաչելութենէն առաջ հաւաքած էր Իր աշակերտները ու առանձնացած Փիլիպպիան Կեսարիայ պատրաստելու համար զանոնք աւետարանչական արջաւի: Հօրմէն Անբաժանելի Յիսուս Իր դաստիարակութեան ընթացքին հարցուցած էր անոնց, թէ ո՞վ կը կարծեն և որո՞ւ կը նմանցնեն իրենց Վարդապետը: Աշակերտները անակընկալի եկած կը պապանձին ու կը ջուարին թէ ի՞նչ ըսեն: Պետրոս աշակերտ, հոգեկան լուսաւորումի ազդեցութեան ներքեւ կը պատասխանէ ըսելով.

«Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին»:

Աշակերտները հաւատացին Պետրոսի դաւանութիւնը, սակայն առանց ըմբռնելու սոյն հաւատքին գորութիւնը: Իրենց Վարդապետին խաչելութիւնը խորտակած էր ոչ միայն իրենց հաւատքը, այլ նաեւ իրենց յոյսն ու ապագայի տեսիլքը: Այժմ Քրիստոսի Յարութենէն յետոյ անոնք պիտի հաւատային ո՛չ թէ որովհետեւ իրենցմէ մին ճշմարտութի՛ւն մը յայտարարած էր, այլ իրե՛նք դարձան կենդանի՛ վկաները յաւերժական Ճշմարտութեան: Թերահաւատ Թովմաս իր Վարդապետը ոչ միայն «Կենդանի Աստուծոյ Որդի» կը կոչէ, այլ **«ԻՄ Տէրս ու Աստուածս»:** Վերածնած ու փոխակերպուած Թովմաս ոչ միայն կը հաւատայ, այլ *միացա՛ծ է*, նոյնացած է իր Վարդապետին հետ:

Քրիստոսի պատասխանը Թովմասին կ'ըլլայ երանաշնորհ ու նաեւ իյթանող: Ան կ'ըսէ. Որովհետեւ

«Դուն զիս տեսար և հաւատացիր, երանի՛ ա՛նոնց որ չեն տեսած ու կը հաւատան»:

Քրիստոս ջատ մը "երանելիութիւններ" նկարագրած է Մատթէոսի Աւետարանին մէջ: Թովմասի ըսած երանութիւնը թէ՛ վերջինն է ու թէ՛ ալ մեծագոյնը. «Երանի՛ ա՛նոնց որ չեն տեսած ու կը հաւատան»: Հաւատալը տեսողութեամբ չգործադրուիր, այլ անձնանուիրումով: Իրականութիւն մը տեսնալէ յետոյ հաւատալու կարիքը կը չգոյանայ: Հաւատալը հաւատքն է անհաւատալիին ջերմօրէն ու ամբողջ եութեամբ: Թովմաս իր վերածնունդով եղաւ սուրբ մը, դարձաւ վկայ մը իր Յիրոջ Յարութեանը ու նահատակուեցաւ իր առաքելութեան ճանապարհին, բայց չկրցաւ մասնակից ըլլալ ԵՐԱՆԵԼԻՆԵՐՈՒ հոյլին: Պօղոս առաքեալ որ չէր աշակերտած Յիսուսի ու չէր տեսած Յարուցեալը, մասնակից եղաւ *երանելիներու* երամին: Քրիստոսի

ձայնը երկնքի խորութիւններէն կը շարունակէ հնչել Բաղքը սրինգի նման ու կը հրաւիրէ Բեգ և զիս մասնակցելու սոյն երանելիներու խումբին: Կուզե՞ս դաւանիլ ու ըսել լուսեղէն Յարուցեալին. «Իմ Տէ՛րս ու Իմ Աստուածս»:

Քրիստոս Իր Յարութենէն յետոյ կրկի՛ն շարունակեց ուսուցանել աշակերտները: Ան երբ վերջացուց ուտելը, ջմեկնեցաւ, այլ շարունակեց լուսաւորել անոնց միտքը: Ան բացաւ անոնց միտքերը, որպէսզի հասկնան Սուրբ գիրքերը, և ըսաւ անոնց.

«Գրուած է, որ Քրիստոս այսպէս պէտք էր ջարջարուէր և երեւ՛ օր ետք յարութիւն առնէր. անոր անու նով ապաշխարութիւն և մեղքերու թողութիւն պէտք էր Բարոգուէր բոլոր ժողովուրդներուն՝ երուսաղէմէն սկսեալ: Ինչքան որ այս բոլորին վկան է՛ք: Եւ ահա ես ձեզի պիտի դրկեմ չօրս տուած խոստումը: Մնացէ՛ք երուսաղէմի մէջ, մինչեւ երկինքէն զօրութիւն ստանաք»:

Քրիստոս պիտի մեկնէր, սակայն մեծագոյն մխիթարութիւնը ա՛յն էր, որ անոնք որք պիտի չմնային, այլ պիտի ստանային չօրը խոստումը՝ Սուրբ Հոգին: Որչափ աւելի կը խօսէր Յիսուս, անոնք այնչափ աւելի կը Բաջալերուէին ու կը լուսաւորուէին: Քրիստոսի ամենէն յուսադրիչ խոստումը՝ Իր *Երկրորդ Գալուստն* էր երբ Ան պիտի յայտնուէր ու աշխարհի թագաւորութիւնը Ի՛նք պիտի ստանցներ:

«Եւ ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր»

Քրիստոսի պանծալի Յարութեան մեծագոյն գրաւականը, Անոր հիմնած Եկեղեցին է այսօր: Քրիստոսի Եկեղեցին կրնայ կորսնցուցած ըլլալ Իր հմայքը, կրնայ իր մէջ ունենալ ուրացողներ, կեղծաւորներ ու վարձկաններ, սակայն Եկեղեցւոյ դուռը բաց է լայնօրէն: Աշխարհի մեծագոյն կայսրութիւնները կործանած են, դրամական ամենահարուստ հաստատութիւնները սնանկացած են, պատմական թագաւորութիւնները արժեքազրկուած են, հեթանոս կրօնքներ ու աստուածամերժ դասաւանդութիւններ անյայտացած ու անոնց կարծեցեալ իմաստութիւնը դարդած: Միայն մէ՛կ հաստատութիւն մը կը գոյատեւէ դարերէ ի վեր՝

Քրիստոսի Եկեղեցին:

Ան գոյատեւած է ո՛չ թէ սուրով ու նիզակով, այլ հաւատով, անձնագոհութեամբ, ծառայութեամբ ու նահատակութեամբ: Եկեղեցին կը գոյատեւէ ու պիտի շարունակէ՝ գոյատեւել, որովհետեւ Անոր Տէրը Յիսուս Քրիստոս յարեալ մեռելներէն ու պիտի յարուցանէ բոլոր Իրեն հաւատացողներն ու Ձինք սիրողները: Ա՛յս Յարութեան պատգամը, զօրութիւն է և իրական ճշմարտութիւն:

20րդ Դարու մարդկութիւնը Էմմաուսի ճամբորդներուն պէս չի տեսներ իր Բովէն Բալող Տէրը, իրեն հետ խօսող Լոյսը, ու յուսահատ կը Բալէ, դեռ չէ հասած հանգրուանը, տակաւին չէ ճանչցած Տէրը, դեռ Անոր հետ սեղանի չէ նստած ու ճաջակած Անոր օրհնութեան հացէն:

1. Բանիներ դեռ խաւարի մէջ կը խարխափեն առանց Յարութեան հաւատալու:
2. Հրաջազան ու արեւափառ հրեշտակը կանգնած թափուր գերեզմանին վրայ կը հնչեցնէ զանգը.

**«Ձի՛ր խնդրէք զԿենդանին ընդ մեռեալս,
չէ աստ, այլ ՅԱՐԵԱԻ»:**